

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԹԻՎԸ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ



ԵՐԵՎԱՆ 2022





Ծրագրի մասին

Այս ուսումնասիրությունը իրականացվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Մասնակցային ժողովրդավարությունը գործողության մեջ» ծրագրի շրջանակներում, որի հիմնական նպատակն է ապահովել հանրային կառավարման և ժողովրդավարական գործընթացների ոլորտներում որոշումների կայացման փաստահենք և մասնակցային գործընթացը:

Ծրագիրն իրականացնում է «Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՅԿ) հասարակական կազմակերպությունը՝ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» և «Զաղաքական երկխոսություն» հասարակական կազմակերպությունների (ՅԿ) գործընկերությամբ:

Ձեկույցի բովանդակության համար պատասխանատու է Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոնը և այն չի արտացոլում Եվրոպական միության տեսակետները:

Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն
Սարյան 12, 5-րդ հարկ Երևան 0002, Հայաստան
Հեռ.՝ (+374 10) 569589, 569689
Էլ. փոստ՝ info@transparency.am
Կայքէջ՝ www.transparency.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	4
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	10
ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ.....	20
ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԻ.....	29
ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	34
ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	36
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	41
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	43
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԹԻՎ. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱԶԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ	45
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԹԻՎ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ	73

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
ԲՏԱՆ	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԹԻՅԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

«Մասնակցային կառավարման համաթիվը ՀՀ պետական կառավարման մարմինների քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում» ուսումնասիրության հիմնական նպատակն է գնահատել ՀՀ օրենսդրությամբ նախարարություններին վերապահված ոլորտներում հանրային քաղաքականության թափանցիկության և հաշվետվողականության աստիճանը, ինչպես նաև ներկայացնելու գործնականում կիրառելի առաջարկություններ դրանց բարելավման նպատակով:

Մասնակցային կառավարման համաթվի խնդիրն է չափել ՀՀ օրենսդրությամբ նախարարություններին վերապահված ոլորտներում հանրային քաղաքականության թափանցիկության և հաշվետվողականության աստիճանը՝ հիմք ընդունելով հանրային մասնակցության ետ ուղեցույցով սահմանված մակարդակները, այն է՝ տեղեկատվության տրամադրումը, խորհրդակցությունը, համագործակցությունը և ակտիվ ներգրավումը:

Հանրային քաղաքականության շրջանակը ներառում է՝ քաղաքականության առաջնահերթությունների սահմանումը, քաղաքականության ձևակերպումը և որոշումների կայացումը, քաղաքականության իրականացումը և քաղաքականության ազդեցության գնահատումը:

Մասնակցային կառավարման համաթվի հաշվարկի հիմքում դրվել է քաղաքականության մշակման գործընթացի փուլերում մասնակցային յուրաքանչյուր մակարդակի համար սահմանված ցուցիչները, որոնցից յուրաքանչյուրը բնութագրում է մասնակցության մակարդակը քաղաքականության գործընթացի կոնկրետ փուլում: Ցուցիչների գնահատման նպատակով մասնակցային կառավարման համաթվի տվյալների հավաքագրման համար մշակվել է ելակետային տվյալների հարցաշար (Հավելված 1): Մասնակցային կառավարման համաթվի հաշվարկման համար նախարարություններից ստացված հարցաշարի ստանդարտացված պատասխանների փորձագիտական գնահատման համար մշակվել է մասնակցային կառավարման առանձին փուլերի ցուցիչները բնութագրող մասնակցության համաթվի գնահատման հարցաշար (Հավելված 2): Արդյունքում, մասնակցային կառավարման բոլոր եղանակների (Տեղեկատվության տրամադրում, խորհրդակցություն, Համագործակցություն, Ակտիվ ներգրավում) համար հաշվարկվել է քաղաքականության առաջնահերթությունների, քաղաքականության ձևակերպման և որոշումների կայացման, քաղաքականության իրականացման և ազդեցության գնահատման փուլերում ենթահամաթվերի բալերի մեծությունները: Մասնավորապես, տեղեկատվության տրամադրման մասնակցային կառավարման համար, տեղեկատվության տրամադրման ենթահամաթվի բալերի հանրագումարը հաշվարկվել է $\sum_{\text{տեղեկատվության տրամադրում}} = \sum_1 + \sum_2 + \sum_3 + \sum_4$, բանաձևով, որտեղ

\sum_1 = տեղեկատվության տրամադրման մակարդակը քաղաքականության առաջնահերթությունների սահմանման փուլում (առավելագույնը՝ 8 միավոր)

\sum_2 = տեղեկատվության տրամադրման մակարդակը քաղաքականության ձևակերպման փուլում (առավելագույնը՝ 28 միավոր)

\sum_3 = տեղեկատվության տրամադրման մակարդակը քաղաքականության իրականացման փուլում (առավելագույնը՝ 40 միավոր)

\sum_4 = տեղեկատվության տրամադրման մակարդակը քաղաքականության ազդեցության գնահատման փուլում (առավելագույնը՝ 24 միավոր):

Մասնակցային կառավարման ամփոփ համաթիվը՝ $\sum \text{մասնակցության համաթիվ} = \max 228 = 1$ կամ 100 տոկոս հաշվարկվել է, որպես մասնակցային գործընթացի յուրաքանչյուր եղանակի (փուլի) ենթահամաթվերի համար սահմանված հարցաշարի պատասխանների տեսականորեն

առավելագույն բալերով սահմանված մեծությունների հանրագումար: Այդ հանրագումարը ($\max 228=1$ կամ 100 տոկոս) ընդունվել է որպես մասնակցային գործընթացի համաթվի առավելագույն մեծություն:

Մասնակցային կառավարման ամփոփ համաթիվը՝ \sum մասնակցության համաթիվ = \sum տեղեկատվության տրամադրում + \sum խորհրդակցություն + \sum համագործակցություն + \sum ակտիվ ներգրավում:

Մասնակցային գործընթացում հաշվարկվել է նաև **ներառականության համաթվի** մեծությունը, որպես սուրբոթարգմանությունների կամ տիտրերի, ձայնային ուղեկցության գործիքների, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնություններին աշխատանքային և այլ ձևաչափով խմբերում ու նախարարին կից հասարակական խորհուրդներում ներգրավվածության գնահատման ցուցիչների հանրագումար:

Մասնակցային կառավարման ներառականության համաթիվը $\sum_{\text{ներառականություն}} = \sum$ սուրբոթարգմանություններ կամ տիտրեր (առավելագույնը 4 միավոր) + \sum ձայնային ուղեկցության գործիքներ (առավելագույնը 4 միավոր) + \sum հաշմանդամություն և ազգային փոքրամասնության ներգրավում (առավելագույնը 20 միավոր) :

Յուրաքանչյուր նախարարության համար վերոնշյալ մեթոդով հաշվարկված, տվյալ մարմնում մասնակցային կառավարման համաթվի բալային գնահատումները համադրելով տեսականորեն առավելագույն բալերով սահմանված մեծության հետ, ստացվել է կոնկրետ նախարարության մասնակցային կառավարման համաթվի մեծությունը և տեղը ուսումնասիրված կամ գնահատված մյուս նախարարությունների շարքում:

Մասնակցային կառավարման համաթվի վարկանիշային աղյուսակի (Աղյուսակ 3) տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ համաթվի մեծությունը 33 նախարարություններում շատ ցածր է՝ տատանվում է առավելագույն մակարդակի 0-46 տոկոսային միջակայքերում: Մասնակցության ամենաբարձր մակարդակ ապահովվել է 33 աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ 46 տոկոսային միավոր:

33 նախարարություններից ստացված հարցաշարի պատասխանների գնահատումների վերլուծությունը (Գծապատկեր 11) վկայում է, որ 12 նախարարություններից և ոչ մեկը չի ապահովել մասնակցության համաթվի առավելագույն գնահատման աստիճանը, որը ենթադրում է, որ ամբողջությամբ չեն իրականացվում մասնակցության 4 փուլերի համար նախատեսված գործընթացներն ու չեն կիրառվում մասնակցային գործընթացը ապահովող գործիքակազմերը:

Մասնակցային կառավարման համաթվի 2020 թվականի գնահատումները՝ մասնակցության գործընթացի առանձին փուլերում (Գծապատկեր 12), ցույց է տալիս, որ նախարարությունների կողմից հիմնականում ապահովվել է մասնակցության **տեղեկատվության տրամադրման** փուլի պահանջները: Նախարարություններում մասնակցության առավել կայացած փուլերից է **համագործակցությունը**, որը պայմանավորված է իրավական ակտերի նախագծերի e-draft.am հարթակի միջոցով հանրային մասնակցության ապահովման գործիքի կիրառման օրենսդրորեն սահմանված պահանջի ապահովմամբ:

Քաղաքականության մշակման և իրականացման շրջափուլերում մասնակցային գործընթացը ապահովող գործիքների՝ հանրային կարծիքի հարցումների, «Թեժ գիծ», «E-request», «Դիմեք մեզ», անհատական և կոլեկտիվ հանրագրերի համակարգերի և այլ կապուղիներով, հանրային քննարկումների ձևաչափերով (հանրային լուսմներ, կլոր-սեղան, ֆոկուս խմբային քննարկումներ և այլն, բացառությամբ e-draft-ի), նախարարին կից հասարակական խորհուրդների, հանրային խորհրդի, միջոցով ստացված տեղեկատվությունը և առաջարկությունները հիմք չեն հանդիսանում նախարարության ոլորտային քաղաքականությունների խնդիրների բացահայտման և քաղաքականության ձևավորման ու որոշումների կայացման համար:

Նախարարություններում մասնակցային **գործընթացները հիմնականում ներառական չեն**: Պաշտոնական կայքէջում և սոցիալական ցանցերում հրապարակված կյուրերում սուրդոթարգմանության, տիտրերի կամ ձայնային ուղեկցումների առկայության, հաշմանդամություն ունեցող և ազգային փոքրամասնությունների ներգրավման մակարդակը նախարարին կից հասարակական խորհուրդներում, նախարարության կողմից ձևավորված աշխատանքային և այլ ձևաչափով խմբերում կրում է էպիգոդիկ բնույթ:

Չնայած մասնակցային կառավարման համաթվի մշակման ուսումնասիրության առաջին փորձին, ստացված արդյունքները գնահատված են հավաքագրված ելակետային տվյալների և դրանց արժանահավատության ռիսկերի առկայության պայմաններում: Այդուհանդերձ, մասնակցային կառավարման համաթվի գործիքը հնարավորություն է ընձեռել վերհանելու նախադրությունների կողմից քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում մասնակցային եղանակների կիրառման համակարգային խնդիրներն ու բացերը, որոնք արժանի են քննարկման և լուծման ՀՀ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության և դրա իրականացման 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզի շրջանակներում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստանձնել է պետությունը ժողովրդավարության ուղով զարգացնելու բավականին հավակնոտ օրակարգ, ինչը խիստ կարևոր է՝ տասնամյակներ շարունակ ավտորիտար կառավարման և կոռուպցիայի ցավալի հետևանքները հաղթահարելու, պետական ինստիտուտներն ամրապնդելու և նրանց նկատմամբ հանրային վստահությունը մեծացնելու առումով:

2022 թվականին հաստատված հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության համաձայն ՀՀ կառավարությունը պետք է ձևավորի արդար և ճիշտ որոշումներ կայացնելուն նպաստող կենսունակ միջավայր՝ խրախուսելով մասնակցային կառավարումը, շահառու խմբերի ներգրավումը քաղաքականության մշակման և իրականացման գործում:¹

Պետական մարմինների կառավարման բնույթը ժողովրդավարական չափանիշների տեսանկյունից համակարգային մոտեցմամբ գնահատելու անհրաժեշտությունը բխում է նշված օրակարգից, ինչպես նաև դրա իրագործմանը հետամուտ լինելու կարևորությունից:

«Մասնակցային կառավարման համաթիվը ՀՀ պետական կառավարման մարմինների քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում» ուսումնասիրության հիմնական նպատակն է գնահատել ՀՀ օրենսդրությամբ նախարարություններին վերապահված ոլորտներում հանրային քաղաքականության թափանցիկության և հաշվետվողականության աստիճանը, ինչպես նաև՝ ներկայացնելու գործնականում կիրառելի առաջարկություններ դրանց բարելավման նպատակով:

Մասնակցային կառավարման համաթիվը մշակվել է՝ հիմք ընդունելով նախարարությունների կողմից հանրային քաղաքականության վարման գործընթացում հանրային մասնակցության տարբեր մակարդակները, որոնք սահմանված են Եվրոպայի խորհրդի քաղաքացիական մասնակցության վերաբերյալ ուղեցույցով²: Դրանք, բնութագրում են մասնակցության մակարդակները՝ սկսած պարզ հաղորդակցությունից ու խորհրդակցությունից մինչև համագործակցություն և ակտիվ ներգրավում: Ուղեցույցի համաձայն՝

- *Տեղեկատվության տրամադրում*. Որոշումների կայացման բոլոր փուլերում բոլոր համապատասխան տեղեկությունները պետք է ներկայացվեն հստակ և հասկանալի լեզվով, համապատասխան և մատչելի ձևաչափով՝ առանց անհարկի վարչական խոչընդոտների և, որպես կանոն, անվճար՝ բաց տվյալների սկզբունքներին համապատասխան: Պետական իշխանությունները պետք է հնարավորինս լայն հասանելիություն ապահովեն առանցքային փաստաթղթերին և տեղեկատվությանը՝ ինչպես անցանց (offline), այնպես էլ առցանց ձևաչափով, առանց այդ տեղեկատվության վերլուծության և վերաօգտագործման սահմանափակումների:
- *Խորհրդակցություն*. Խորհրդակցությունը պետական մարմիններին թույլ է տալիս հավաքագրել անհատների, ՔՀԿ-ների և ընդհանրապես հասարակության տեսակետները որոշակի քաղաքականության կամ թեմայի վերաբերյալ և հանդիսանում է պաշտոնական ընթացակարգի բաղկացուցիչ: Խորհրդակցությունը կարող է իրականացվել տարբեր միջոցների և գործիքների միջոցով, ինչպիսիք են հանդիպումները, հանրային լսումները, ֆոկուս խմբերը, հարցումները, հարցաթերթիկները և թվային գործիքները: Պետական

¹ ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N 691-Լ «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկը հաստատելու մասին» որոշում, Հավելված 1, գլուխ 3-րդ, 16-րդ կետ, 2-րդ ենթակետ, էջ 7:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=162791>

մարմինները խորհրդակցությունների արդյունքների վերաբերյալ պետք է ապահովեն հրապարակայնորեն հասանելի հետադարձ հաղորդակցություն, մասնավորապես՝ ընդունված որոշումների հիմնավորումների մասին:

- *Համագործակցություն.* Համագործակցությունը համակարգված, երկարատև և արդյունքամետ գործընթաց է, որի հիմքում պետական մարմինների, անհատների, ՔՀԿ-ների և ընդհանուր առմամբ քաղաքացիական հասարակության միջև կարծիքների փոխանակման փոխադարձ շահագրգռվածությունն է: Պետական մարմինները, ՔՀԿ-ները և լայն քաղաքացիական հասարակությունը որպես երկխոսության և մասնակցության մշտական տարածք կարող են դիտարկել տարբեր հարթակների ստեղծման հնարավորությունը: Դրանք կարող են ներառել կանոնավոր հանրային լուսմներ, հանրային ֆորումներ, խորհրդակցական մարմիններ կամ նմանատիպ կառույցներ:
- *Ակտիվ ներգրավում.* Ակտիվ ներգրավումը ենթադրում է որոշումների կայացման գործընթացներում քաղաքացիական մասնակցության հնարավորություններ, որոնք ավելին են, քան տեղեկատվության տրամադրումը, խորհրդակցությունը կամ երկխոսությունը: Այն կարող է լինել աշխատանքային խմբերի կամ հանձնաժողովների միջոցով, որոնք ստեղծվում են փաստաթղթերի, ինչպես նաև քաղաքականությունների և օրենքների համատեղ մշակման նպատակով, ինչն ի վերջո ենթադրում է համապատասխան հանրային մարմնի որոշում: Համատեղ աշխատանքային խմբերի կամ հանձնաժողովների դեպքում պետական մարմինները պետք է թափանցիկ չափանիշներ և գործընթացներ սահմանեն անհատների, ՔՀԿ-ների և ընդհանրապես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար: Որոշումների կայացման տարբեր փուլերի, ինչպես նաև որոշումների կիրարկման համար կարող են նպատակահարմար լինել հանրային մարմինների, ՔՀԿ-ների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ գործընկերության տարբեր ձևաչափեր:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության առարկա

Մասնակցային կառավարման համաթվի խնդիրն է չափել ՀՀ օրենսդրությամբ նախարարություններին վերապահված ոլորտներում հանրային քաղաքականության թափանցիկության և հաշվետվողականության աստիճանը՝ հիմք ընդունելով հանրային մասնակցության ետ ուղեցույցով սահմանված մակարդակները, այն է՝ տեղեկատվության տրամադրումը, խորհրդակցությունը, համագործակցությունը և ակտիվ ներգրավումը: Հանրային քաղաքականության շրջանակը ներառում է դրա բոլոր փուլերը, ներառյալ՝ օրակարգի և քաղաքականության առաջնահերթությունների սահմանումը, քաղաքականության ձևակերպումը և որոշումների կայացումը, քաղաքականության իրականացումը և քաղաքականության գնահատումը:

Գծապատկեր 1. Քաղաքականության փուլեր



- *Քաղաքականության առաջնահերթությունների սահմանման* շրջանակը ներառում է քաղաքականություն մշակելու գործողությունից առաջ առկա խնդիրների առնչությամբ հանրության հետ հաղորդակցությունը, առաջնահերթությունների վերաբերյալ հանրային կարծիքի վերհանումը և հանրային քննարկումները, ինչպես նաև անհատական նախաձեռնությունների և հանրագրերի միջոցով առաջնահերթությունների սահմանումը:
- *Քաղաքականության ձևակերպման և որոշումների կայացման* շրջանակը ներառում է քաղաքականության փաստաթղթերի (իրավական ակտերի) հանրային հասանելիությունը, մատչելիությունը և հիմնավորվածությունը, փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ հանրային կարծիքի վերհանումը, նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների և հետադարձ կապի ապահովումը, ինչպես նաև անհատական և կոլեկտիվ հանրագրերի և հանրաքվեների միջոցով որոշումների կայացումը:
- *Քաղաքականության իրականացման* շրջանակը ներառում է ծառայությունների, վարչական ռեգիստրների, նախարարության գործունեության մոնիթորինգի զեկույցների/ հաշվետվությունների հասանելիությունը, նախարարությունների կողմից մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ հանրային կարծիքի վերհանումը, հանրային քննարկումները և հետադարձ կապի ապահովումը, ինչպես նաև պետություն-մասնավոր հատված-ԶՀԿ-եր համագործակցությունը ծառայությունների մատուցման համատեքստում:
- *Քաղաքականության գնահատման* շրջանակը ներառում է նախարարության ոլորտային քաղաքականությունների և գործունեության գնահատման հաշվետվությունների ու զեկույցների հասանելիությունը, դրանց վերաբերյալ հանրային կարծիքի վերհանումը, հանրային քննարկումների արդյունքների գործնական կիրառումը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի մասնակցությունը գնահատման զեկույցների/հաշվետվությունների մշակման գործընթացում:

Համաթվի հաշվարկի մեթոդ

Մասնակցային կառավարման համաթվի հաշվարկի հիմքում դրվել է քաղաքականության մշակման գործընթացի փուլերում մասնակցային յուրաքանչյուր մակարդակի համար սահմանված համապատասխան ցուցիչները, որոնցից յուրաքանչյուրը բնութագրում է

մասնակցության մակարդակը քաղաքականության գործընթացի կոնկրետ փուլում : Ցուցիչների գնահատման նպատակով մասնակցային կառավարման համաթվի ելակետային տվյալների հավաքագրման համար մշակվել է հարցաշար (Հավելված 1): Հարցաշարի հարցերի հնարավոր պատասխանները ստանդարտացված են կոնկրետ քանակական պատասխանների տեսքով: Օրինակ, «Նախարարության կողմից մշակված քաղաքականության փաստաթղթերի նախապատրաստման փուլում հանրային իրազեկման ներկայացված փաստաթղթերի նախագծերի քանակը», կամ «Նախարարության կողմից 2021 թվականի ընթացքում մշակված օրենքների նախագծերի քանակը» և այլն:

Հարցաշարում, 101 ներկայացված հարցից 13-ի մասով, այդ թվում խոցելի խմբերի (ազգային փոքրամասնություններ, հաշմանդամություն ունեցող անձանց) մասնակցության ապահովման վերաբերյալ հարցերի պատասխանները գնահատվել են նախապես սահմանված հնարավոր տարբերակներից ընտրության եղանակով: Օրինակ, «Այլ ձևաչափով հանրային քննարկումից միջինում քանի օր առաջ է հրապարակվել քննարկման հայտարարությունը» հարցի հնարավոր պատասխաններ նշված են՝ «Քննարկման օրը», «Քննարկումից մինչև 5 օր առաջ», «Քննարկումից 6-10 օր առաջ», «Քննարկումից 11-15 օր առաջ», «Քննարկումից 16 և ավել օր առաջ» ստանդարտացված տարբերակները:

խոցելի խմբերի մասով, սուրդոթարգմանությունների, տիտրերի, տեքստային հրապարակումների, ձայնային ուղեկցության գործիքների կիրառման, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավման, խոցելի խմբերի տեսանկյունից իրավական ակտերի նախագծերի փորձաքննության իրականացման վերաբերյալ հարցաշարի պատասխանները ներկայացված են ստանդարտացված որակական պատասխանների տեսքով: Օրինակ, «Նախարարին կից հասարակական խորհրդում որքանով են ընդգրկված հաշմանդամություն ունեցող անձինք» հարցի հնարավոր պատասխաններ հարցաշարում նշված են «Ամբողջությամբ ներառված են», «Հիմնականում ներառված են», «Մասամբ ներառված են», «Ներառված չեն» ստանդարտացված տարբերակները:

Մասնակցային կառավարման համաթվի հաշվարկման ելակետային հարցաշարի (Հավելված 1) պատասխանների գնահատման համար կիրառվել է փորձագիտական մեթոդ: Որպես փորձագետներ հանդես են եկել ԹԻՀԿ «Մասնակցային ժողովրդավարությունը գործողության մեջ» ծրագրում ներգրավված աշխատակիցները:

Մասնակցային կառավարման համաթվի հաշվարկման հարցաշարի նախարարություններից ստացված ստանդարտացված պատասխանների փորձագիտական գնահատման համար մշակվել է մասնակցային կառավարման առանձին փուլերի ցուցիչները բնութագրող մասնակցության համաթվի գնահատման հարցաշար (Հավելված 2): Հավելված 2-ի հարցաշարում ներառված հարցերը ամփոփում են մասնակցային կոնկրետ եղանակի դեպքում ելակետային հարցաշարի յուրաքանչյուր հարցի քանակական բացարձակ թվային մեծությունները՝ տոկոսային գնահատման փոխարկելու բանաձևերը: Մասնավորապես, «Նախարարության կողմից մշակված և ԱԺ կողմից ընդունված օրենքներից քանի տոկոս է հրապարակվել նախարարության պաշտոնական կայքէջում» հարցի ներքո գնահատվել է «Նախարարության կողմից մշակված և ԱԺ կողմից 2020 թվականին ընդունված օրենքներից քանիսն են հրապարակվել նախարարության կայքէջում» ելակետային հարցի պատասխանի թվային տվյալը հարաբերելով «Նախարարության կողմից 2020 թվականի ընթացքում քանի օրենքի նախագիծ է մշակվել (ներկայացվել է նախարարին, կառավարություն կամ Վարչապետին)» հարցի պատասխանի թվային տվյալին՝ ստանալով տոկոսային մեծություն:

Ելակետային հարցաշարի պատասխանների ստացված տոկոսային մեծությունները համադրվել են փորձագիտական գնահատման նպատակով մշակված բալային սանդղակի հետ (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ելակետային հարցաշարի պատասխանների գնահատման բալային սանդղակ

Տոկոսային միջակայք	0	0-25	25-50	50-75	75-100
Բալեր	0	1	2	3	4

Ելակետային հարցաշարի 8 հարցերի (7-րդ, 15-րդ, 23-րդ, 49-րդ, 65-րդ, 71-րդ, 73-րդ, 75-րդ) ստանդարտացված պատասխանները վերափոխվել են բալային միավորների համաձայն Չավելված 2-ի 16-րդ, 35-րդ, 39-40-րդ, 43-րդ, 45-րդ, 47-49-րդ, 53-րդ, 55-րդ, 57-րդ, 61-63-րդ հարցերի հաշվարկման բանաձևերով:

Խոցելի խմբերի ներառականության գնահատման համար ելակետային հարցաշարի 97-ից 101-րդ հարցերի ստանդարտացված՝ «Ամբողջությամբ առկա է», «Հիմնականում առկա է», «Մասամբ առկա է», «Բացակայում է» որակական պատասխանները տոկոսային մեծությունների վերափոխման և բալային գնահատման է ենթարկվել աղյուսակ 2-ի գնահատման սանդղակով:

Աղյուսակ 2. Խոցելի խմբերի ելակետային հարցաշարի պատասխանների փորձագիտական գնահատման սանդղակ

Ստանդարտացված պատասխան	Բացակայում է	Մասամբ առկա է	Հիմնականում առկա է	Ամբողջությամբ առկա է
Տոկոսային միջակայք	0-25	25-50	50-75	75-100
Բալեր	1	2	3	4

Մասնակցային գործընթացի յուրաքանչյուր եղանակի և քաղաքականության շրջափուլի համար հարցաշարի ստացված պատասխանները ամփոփվել են բալային գնահատականների հանրագումարով: Վերջինիս հիման վրա էլ հաշվարկվել է քաղաքականության կոնկրետ շրջափուլի և մասնակցային գործընթացի տվյալ եղանակը բնութագրող հարցերի պատասխանների տոկոսային միջակայքերում ստացված միավորների հանրագումարը: Այսպես, օրինակ, տեղեկատվության տրամադրման մակարդակը քաղաքականության առաջնահերթությունների սահմանման փուլում հարցաշարի 1-6 հարցերի ստացված պատասխանների տոկոսային գնահատականները՝ աղյուսակ 1-ի տոկոսային սանդղակով 0-4 բալերի վերածելու միջոցով, ստանում ենք տեղեկատվության տրամադրման մասնակցային եղանակի բալերի քանակը՝ Σ : Նշված ցուցիչով հարցաշարի պատասխանների առավելագույն բալերի քանակը կարող է հասնել 4 միավոր * 7 հարց = 28 միավորի: (Տես, Մասնակցային կառավարման համաթվի հաշվարկման սխեման)

Նույն տրամաբանությամբ գնահատումը իրականացվել է քաղաքականության մյուս շրջափուլերի՝ քաղաքականության ձևակերպման, քաղաքականության իրականացման և քաղաքականության ազդեցության գնահատման փուլեր համար:

Արդյունքում, մասնակցային գործընթացի բոլոր եղանակների (Տեղեկատվության տրամադրում, Խորհրդակցություն, Համագործակցություն, Ակտիվ ներգրավում) համար հաշվարկվել է քաղաքականության ձևակերպման, քաղաքականության իրականացման և քաղաքականության ազդեցության գնահատման փուլերի բալերի հանրագումարը: Օրինակ՝ տեղեկատվության տրամադրման մասնակցային գործընթացի համար, տեղեկատվության տրամադրման ենթահամաթվի բալերի հանրագումարը հաշվարկվել է $\sum_{\text{տեղեկատվության տրամադրում}} = \sum_1 + \sum_2 + \sum_3 + \sum_4$, բանաձևով, որտեղ

$\sum_1 =$ տեղեկատվության տրամադրման մակարդակը քաղաքականության առաջնահերթությունների սահմանման փուլում (առավելագույնը՝ 8 միավոր)

$\sum_2 =$ տեղեկատվության տրամադրման մակարդակը քաղաքականության ձևակերպման փուլում (առավելագույնը՝ 28 միավոր)

$\sum_3 =$ տեղեկատվության տրամադրման մակարդակը քաղաքականության իրականացման փուլում (առավելագույնը՝ 40 միավոր)

$\sum_4 =$ տեղեկատվության տրամադրման մակարդակը քաղաքականության ազդեցության գնահատման փուլում (առավելագույնը՝ 24 միավոր):

Մասնակցային կառավարման ամփոփ համաթիվը՝ $\sum_{\text{մասնակցության համաթիվ}} = \max 228 = 1$ կամ 100 տոկոս հաշվարկվել է, որպես մասնակցային գործընթացի յուրաքանչյուր եղանակի (փուլի) ենթահամաթվերի համար սահմանված հարցաշարի պատասխանների տեսականորեն առավելագույն բալերով սահմանված մեծությունների հանրագումար: Այդ հանրագումարը ($\max 228 = 1$ կամ 100 տոկոս) ընդունվել է որպես մասնակցային կառավարման համաթվի առավելագույն մեծություն:

Մասնակցային կառավարման ամփոփ համաթիվը՝ $\sum_{\text{մասնակցության համաթիվ}} = \sum_{\text{տեղեկատվության տրամադրում}} + \sum_{\text{խորհրդակցություն}} + \sum_{\text{համագործակցություն}} + \sum_{\text{ակտիվ ներգրավում}}$:

Մասնակցային գործընթացում ներառականության համաթվի մեծությունը հաշվարկվել է որպես սուրբթարգմանությունների կամ տիտրերի, ձայնային ուղեկցության գործիքների, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնություններին աշխատանքային և այլ ձևաչափով խմբերում ու նախարարին կից հասարակական խորհուրդներում ներգրավվածության գնահատման ցուցիչների հանրագումարով:

Մասնակցային կառավարման ներառականության համաթիվը $\sum_{\text{ներառականություն}} = \sum_{\text{սուրբթարգմանություններ կամ տիտրեր (առավելագույնը 4 միավոր)}} + \sum_{\text{ձայնային ուղեկցության գործիքներ (առավելագույնը 4 միավոր)}} + \sum_{\text{հաշմանդամության և ազգային փոքրամասնության ներգրավում (առավելագույնը 20 միավոր)}} :$

Յուրաքանչյուր պետական կառավարման մարմնի համար վերոնշյալ մեթոդով հաշվարկված, տվյալ մարմնում մասնակցային կառավարման համաթվի բալային գնահատումները համադրելով տեսականորեն առավելագույն բալերով սահմանված մեծության հետ, կստանանք տվյալ մարմնի մասնակցային կառավարման համաթվի մեծությունը և տեղը ուսումնասիրված կամ գնահատված պետական կառավարման մյուս մարմինների շարքում:

Յուրաքանչյուր նախարարությունում մասնակցային կառավարման ընդհանուր համաթվից շեղումները բացահայտելու համար մասնակցային գործընթացի յուրաքանչյուր եղանակի և քաղաքականության շրջափուլի ենթահամաթվերը ցույց կտան շեղումների աղբյուրները և պատճառները (տես մասնակցային կառավարման համաթվի հաշվարկման սխեման):

Նախարարություններում մասնակցային գործընթացը գնահատվել է ըստ փորձագիտական գնահատման հարցաշարի (Հավելված 2)։

Մասնակցության գործընթացի մակարդակ

- **Տեղեկատվության տրամադրման** մասով (1-25-րդ հարցեր, առավելագույնը՝ 100 միավոր) գնահատվել է քաղաքականություն մշակելուց առաջ առկա խնդիրների ու առաջնահերթությունների հանրությանը հաղորդակցության մակարդակը, քաղաքականության փաստաթղթերի հանրային հասանելիությունը, մատչելիությունը և հիմնավորվածությունը, ծառայությունների, վարչական ռեզիստրների, նախարարության գործունեության մոնիթորինգի զեկույցների/հաշվետվությունների հասանելիությունը, նախարարության ոլորտային քաղաքականությունների և գործունեության գնահատման հաշվետվությունների/զեկույցների հասանելիությունը:
- **Խորհրդակցության** մասով (26-38-րդ հարցեր, առավելագույնը՝ 52 միավոր) գնահատվել է քաղաքականության առաջնահերթությունների, քաղաքականության փաստաթղթերի (իրավական ակտերի) նախագծերի վերաբերյալ հանրային կարծիքի վերհանումը, ծառայությունների որակի վերաբերյալ հանրային կարծիքի վերհանման մակարդակը, քաղաքականությունների գնահատման հաշվետվությունների/զեկույցների վերաբերյալ հանրային կարծիքի վերհանման մակարդակը:
- **Համագործակցության** մասով (39-60-րդ հարցեր, առավելագույնը՝ 56 միավոր) գնահատվել է քաղաքականության առաջնահերթությունների սահմանման հանրային քննարկումների մակարդակը, քաղաքականության փաստաթղթերի (իրավական ակտերի) նախագծերի, ծառայությունների որակի վերաբերյալ հանրային քննարկումների և հետադարձ կապի ապահովման մակարդակները, քաղաքականությունների գնահատման հաշվետվությունների/ զեկույցների հանրային քննարկումների գործնականում կիրառման մակարդակը:
- **Ակտիվ ներգրավման** առումով (61-65-րդ հարցեր, առավելագույնը՝ 20 միավոր) գնահատվել է անհատական և կոլեկտիվ հանրագրերի միջոցով քաղաքականության առաջնահերթությունների սահմանման մակարդակը, քաղաքականության փաստաթղթերի նախագծերի անհատական և կոլեկտիվ հանրագրերի, հանրաքվեների միջոցով որոշումների կայացման, ծառայությունների մատուցման պետություն-մասնավոր հատված-ԶՀԿ համագործակցության և քաղաքականությունների ազդեցության գնահատման հաշվետվությունների/զեկույցների պատվիրակման մակարդակները:

Քաղաքականության փուլերում մասնակցության մակարդակ

- **Քաղաքականության առաջնահերթությունների սահմանման** առումով (1-6, 26-29, 39-46 և 61-րդ հարցեր, առավելագույնը 76 միավոր) գնահատվել է քաղաքականություն մշակելուց առաջ առկա խնդիրների ու առաջնահերթությունների, հանրությանը հաղորդակցության, քաղաքականության առաջնահերթությունների հանրային կարծիքի միջոցով վերհանման, հանրային քննարկումների միջոցով քաղաքականության առաջնահերթությունների սահմանման և անհատական ու կոլեկտիվ հանրագրերի միջոցով քաղաքականության առաջնահերթությունների սահմանման մակարդակները:
- **Քաղաքականության ձևակերպման և որոշումների կայացման** առումով (7-16, 30-31, 47-49, 62-63-րդ հարցեր, առավելագույնը 68 միավոր) գնահատվել է քաղաքականության փաստաթղթերի հանրային հասանելիությունը, մատչելիությունը և հիմնավորվածությունը, քաղաքականության փաստաթղթերի (իրավական ակտերի) նախագծերի հանրային կարծիքի միջոցով վերհանման մակարդակը, քաղաքականության փաստաթղթերի (իրավական ակտերի) նախագծերի հանրային քննարկումների և հետադարձ կապի ապահովման մակարդակը, քաղաքականության

փաստաթղթերի (իրավական ակտերի) նախագծերի անհատական և կոլեկտիվ հանրագրերի և հանրաքվեների միջոցով որոշումների կայացման մակարդակը:

- **Քաղաքականության իրականացման** առումով (17-23, 32, 58-59, 64-րդ հարցեր, առավելագույնը 44 միավոր) գնահատվել է ծառայությունների, վարչական ռեգիստրների, նախարարության գործունեության մոնիտորինգի զեկույցների/հաշվետվությունների հասանելիության, ծառայությունների որակի վերաբերյալ հանրային կարծիքի միջոցով վերհանման մակարդակը, ծառայությունների որակի վերաբերյալ հանրային քննարկումների և հետադարձ կապի ապահովման մակարդակը, ծառայությունների մատուցման պետություն-մասնավոր հատված-ՔՀԿ-ներ համագործակցության մակարդակը:
- **Քաղաքականության ազդեցության գնահատման** առումով (24-25, 33-38, 60 և 65-րդ հարցեր, առավելագույնը 40 միավոր) գնահատվել է նախարարության ոլորտային քաղաքականությունների և գործունեության գնահատման հաշվետվությունների/զեկույցների հասանելիությունը, քաղաքականությունների գնահատման հաշվետվությունների/զեկույցների վերաբերյալ հանրային կարծիքի միջոցով վերհանման մակարդակը, քաղաքականությունների գնահատման հաշվետվությունների/զեկույցների հանրային քննարկման արդյունքները գործնականում կիրառման մակարդակը, քաղաքականությունների ազդեցության գնահատման հաշվետվությունների/զեկույցների պատվիրակման մակարդակը:

Այսպիսով, սահմանված մեթոդաբանության համաձայն, մասնակցային կառավարման համաթիվը ամփոփում է պետական մարմինների կողմից քաղաքականության գործընթացի բոլոր փուլերում հանրային ներգրավման բոլոր մակարդակների գնահատականների հանրագումարը՝ որպես վերջնական համաթիվ:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԱՄԱԹՎԻ ԴԱՇՎԱՐԿՄԱՆ ՍԽԵՄԱ

Քաղաքականության փուլերը	Մասնակցության եղանակները				Համաթիվ՝ ըստ փուլերի
	Տեղեկատվության տրամադրում (1-25-րդ հարցեր)	Խորհրդակցություն (26-38-րդ հարցեր)	Համագործակցություն (39-60-րդ հարցեր)	Ակտիվ ներգրավում (61-65-րդ հարցեր)	
<p>1. Քաղաքականության առաջնահերթությունների սահմանում</p>	<p>Ցուցիչ: Քաղաքականություն մշակելուց առաջ առկա խնդիրների ու առաջնահերթությունների հանրությանը հաղորդակցության մակարդակ</p> <p>1-6-րդ հարցեր Max $\Sigma=24$ բալ</p>	<p>Ցուցիչ: Քաղաքականության առաջնահերթությունների հանրային կարծիքի միջոցով վերհանման մակարդակ</p> <p>26-29-րդ հարցեր Max $\Sigma=16$ բալ</p>	<p>Ցուցիչ: Քաղաքականության առաջնահերթությունների սահմանման հանրային քննարկումների մակարդակ</p> <p>39-46-րդ հարցեր Max $\Sigma=32$ բալ</p>	<p>Ցուցիչ: Քաղաքականության առաջնահերթությունների սահմանման մակարդակ՝ անհատական և կոլեկտիվ հանրագրերի միջոցով</p> <p>61-րդ հարց Max $\Sigma=4$ բալ</p>	<p>Σ քաղաքականության առաջնահերթությունների սահմանում =max76</p>
<p>2. Քաղաքականության ձևակերպում և որոշումների կայացում</p>	<p>Ցուցիչ: Քաղաքականության փաստաթղթերի հանրային հասանելիություն, մատչելիություն և հիմնավորվածություն</p> <p>7-16-րդ հարցեր Max $\Sigma=40$ բալ</p>	<p>Ցուցիչ: Քաղաքականության փաստաթղթերի (իրավական ակտերի) նախագծերի հանրային կարծիքի միջոցով վերհանման մակարդակ</p> <p>30-31-րդ հարցեր Max $\Sigma=8$ բալ</p>	<p>Քաղաքականության փաստաթղթերի (իրավական ակտերի) նախագծերի հանրային քննարկումների և հետադարձ կապի ապահովման մակարդակ</p> <p>47-49-րդ հարցեր Max $\Sigma=12$ բալ</p>	<p>Ցուցիչ: Քաղաքականության փաստաթղթերի (իրավական ակտերի) նախագծերի անհատական և կոլեկտիվ հանրագրերի և հանրաքվեների միջոցով որոշումների կայացման մակարդակ</p> <p>62-63-րդ հարցեր</p>	<p>Σ քաղաքականության ձևակերպում և որոշումների կայացում =max68</p>

Քաղաքականության փուլերը	Մասնակցության եղանակները				Համաթիվ՝ ըստ փուլերի
	Տեղեկատվության տրամադրում (1-25-րդ հարցեր)	Խորհրդակցություն (26-38-րդ հարցեր)	Համագործակցություն (39-60-րդ հարցեր)	Ակտիվ ներգրավում (61-65-րդ հարցեր)	
				Max $\Sigma=8$ բալ	
3. Քաղաքականության իրականացում	Ցուցիչ: Ծառայությունների, Վարչական ռեգիստրների, Նախարարության գործունեության մոնիտորինգի զեկույցների/հաշվետվությունների հասանելիություն 17-23-րդ հարցեր Max $\Sigma=28$ բալ	Ցուցիչ: Ծառայությունների որակի վերաբերյալ հանրային կարծիքի միջոցով վերհանման մակարդակ 32-րդ հարց Max $\Sigma=4$ բալ	Ցուցիչ: Ծառայությունների որակի վերաբերյալ հանրային քննարկումների և հետադարձ կապի ապահովման մակարդակ 58-59-րդ հարցեր Max $\Sigma=8$ բալ	Ցուցիչ: Ծառայությունների մատուցման պետություն-մասնավոր հատված-ԲՅԿ-ներ համագործակցության մակարդակ 64-րդ հարց Max $\Sigma=4$ բալ	Σ քաղաքականության իրականացում =max44

Քաղաքականության փուլերը	Մասնակցության եղանակները				Համաթիվ՝ ըստ փուլերի
	Տեղեկատվության տրամադրում (1-25-րդ հարցեր)	Խորհրդակցություն (26-38-րդ հարցեր)	Համագործակցություն (39-60-րդ հարցեր)	Ակտիվ ներգրավում (61-65-րդ հարցեր)	
4. Քաղաքականության ազդեցության գնահատում	Ցուցիչ: Նախարարության ոլորտային քաղաքականությունների և գործունեության գնահատման հաշվետվությունների/զեկույցների հասանելիություն 24-25-րդ հարցեր Max $\Sigma=8$ բալ	Ցուցիչ: Քաղաքականությունների գնահատման հաշվետվությունների/զեկույցների վերաբերյալ հանրային կարծիքի միջոցով վերհանման մակարդակ 33-38-րդ հարցեր Max $\Sigma=24$ բալ	Ցուցիչ: Քաղաքականությունների գնահատման հաշվետվությունների/զեկույցների հանրային քննարկման արդյունքների գործնականում կիրառման մակարդակ 60-րդ հարց Max $\Sigma=4$ բալ	Ցուցիչ: Քաղաքականությունների ազդեցության գնահատման հաշվետվությունների/զեկույցների պատվիրակման մակարդակ 65-րդ հարց Max $\Sigma=4$ բալ	Σ քաղաքականության ազդեցության գնահատում =max40
Համաթիվ՝ ըստ մասնակցության եղանակների	Σ տեղեկատվության տրամադրում = max 100	Σ խորհրդակցություն = max 52	Σ համագործակցություն = max 56	Σ ակտիվ ներգրավում = max 20	Σ մասնակցության համաթիվ = 228 = 1 կամ 100 տոկոս

Տվյալների հավաքագրում

Մասնակցային կառավարման համաթվի ուսումնասիրությունն իրականացվել է 12 նախարարությունների շրջանում: Տվյալների հավաքագրումը իրականացվել է ելակետային տվյալների հավաքագրման հարցաշարի (Հավելված 1) միջոցով:

Տվյալների հավաքագրման գործընթացում ԹԻՅԿ կողմից նախարարություններին տրամադրվել է խորհրդատվություն, պարզաբանումներ և բացատրություններ, հարցաշարի լրացման, մասնակցային գործընթացի և քաղաքականության մշակման ու իրականացման առանձին փուլերի գործիքակազմերի վերաբերյալ:

Հարցաշարը նախապես քննարկվել ու ամփոփվել է ոլորտային փորձագետների և պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների հետ: Իրականացվել է դրա փորձարկում ՀՀ արդարադատության նախարարության մասնակցությամբ:

Տվյալները հավաքագրվել են 2022թ. առաջին կիսամյակում 2020 թվականի վերաբերյալ, քանի որ ուսումնասիրության իրականացման պահին բացակայել է նախարարությունների 2021թ. ամենամյա գործունեության վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Հարցաշարերի պատասխանների վերլուծության և ամփոփման նպատակով դրանց քանակական արժեքները ներմուծվել են նախապես մշակված տվյալների բազա: Այն բոլոր դեպքերում, երբ նախարարություններից ստացված պատասխանները տրամադրվել են միայն ընդհանրական բացատրությունների տեսքով՝ հղում տալով գործող օրենսդրությանը, կամ որևէ պատասխան ընդհանրապես չի նշվել, կամ հարցաշարի պատասխանները հնարավոր չի եղել պարզել հղումներից և/կամ բացատրություններից, ապա բոլոր նման դեպքերում հարցաշարի պատասխանները փորձագետների կողմից գնահատվել է 0 միավոր:


ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ

Տեղեկատվության տրամադրում

Մասնակցության տեղեկատվության տրամադրման եղանակի համար գնահատման հիմք են հանդիսացել հետևյալ ցուցիչները.

- Քաղաքականություն մշակելուց առաջ առկա խնդիրների առաջնահերթությունների հանրությանը հաղորդակցության մակարդակը, ներառյալ՝ քաղաքականության փաստաթղթերի, կառավարության որոշումների և օրենքի նախագծերի նախապատրաստական փուլում կարգավորվող խնդրի մասին հանրության իրազեկումը:
- Քաղաքականության փաստաթղթերի հանրային հասանելիությունը, մատչելիությունը և հիմնավորվածությունը, ներառյալ՝ քաղաքականության փաստաթղթերի, կառավարության որոշումների և օրենքի նախագծերի հրապարակումը նախարարության պաշտոնական կայքէջում, դրանց առցանց հասանելիությունը ազատ օգտագործման և վերաօգտագործման համար, փաստաթղթերին կից հիմնավորումների առկայությունը և հրապարակումը arlis.am կայքում:
- Նախարարությունների կողմից մատուցվող ծառայությունների, վարչական ռեգիստրների, նախարարության գործունեության մոնիթորինգի զեկույցների/հաշվետվությունների հասանելիությունը, ներառյալ՝ նախարարության պաշտոնական կայքէջերում մատուցվող ծառայությունների անվանումների և ընթացակարգերի նկարագրության, վարչական ռեգիստրների, ինչպես նաև մոնիթորինգի զեկույցների առկայությունը, դրանց հասանելիությունը ազատ օգտագործման և վերաօգտագործման համար:
- Նախարարության ոլորտային քաղաքականությունների և գործունեության գնահատման հաշվետվությունների/զեկույցների հասանելիությունը, ներառյալ՝ նախարարության գործունեության և վերապահված ոլորտների վերջնական գնահատման զեկույցների/հաշվետվությունների հրապարակումը նախարարության կայքէջում, ինչպես նաև դրանց առցանց հասանելիությունը ազատ օգտագործման և վերաօգտագործման համար:

Գծապատկեր 2. Մասնակցային կառավարման համաթիվը՝ ըստ մասնակցության տեղեկատվության տրամադրման եղանակի (առավելագույնը 100 բալլ)



Մասնակցության գործընթացի համաթիվը՝ ըստ մասնակցության տեղեկատվության տրամադրման եղանակի (գծապատկեր 2) ցույց է տալիս, որ նախարարությունների կեսը ապահովում են 30-ից-50 տոկոսային մակարդակ: Սա նշանակում է, որ տեղեկատվության տրամադրման գործընթացները իրականացվում են կիսով չափ, ոչ լիարժեքորեն:

Մասնավորապես, ըստ հավաքագրված տվյալների, նախարարություններից միայն 3-ն են (ԲՏԱՆ, ԱՍՀՆ, ԿԳՄՍՆ) նշել քաղաքականություն մշակելուց առաջ խնդիրների և առաջնահերթությունների հանրային հաղորդակցության վերաբերյալ: Սակայն նույն նախարարությունների կողմից տրամադրված հղումների փորձագիտական գնահատումները ակնհայտ են դարձնում, որ խոսքը գնում է ոչ թե խնդիրների և առաջնահերթությունների, այլ արդեն իսկ մշակված իրավական ակտերի նախագծի վերաբերյալ, որոնք վերաբերելի չեն քաղաքականության առաջնահերթությունների սահմանման փուլին:

Նախարարությունների կայքէջերում ՀՀ կառավարության որոշումների, ռազմավարական, հայեցակարգային փաստաթղթերի, գործողությունների ծրագրերի ու ճանապարհային քարտեզների հրապարակման, ինչպես նաև ազատ օգտագործման և վերաօգտագործման մասին նշել են միայն նախարարություններից 5-ը (ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, ԿԳՄՍ, Ֆինանսների և արտաքին գործերի): Այդուհանդերձ, 7 (Արտակարգ իրավիճակների, առողջապահության, արդարադատության, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, պաշտպանության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և արտաքին գործերի նախարարությունները) նախարարություններ չեն տրամադրել քանակական կոնկրետ տվյալներ 2020 թվականին ընդունված և հրապարակված ՀՀ կառավարության որոշումների, ռազմավարական, հայեցակարգային փաստաթղթերի, գործողությունների ծրագրերի ու ճանապարհային քարտեզների վերաբերյալ՝ նշելով որ նման վիճակագրություն չի վարվում:

Նախարարությունների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տրամադրված տվյալների համատեքստում, կայքէջերում նախարարությունների կողմից մատուցվող ծառայությունների նկարագրերը հասանելի են ՀՀ շրջակա միջավայրի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, ֆինանսների, աշխատանքի և սոցիալական հարցերի և պաշտպանության

Նախարարությունների դեպքում: Հարկ է նշել, որ նմանատիպ ծառայություններ առկա են նաև մյուս նախարարությունների դեպքում, որոնց վերաբերյալ հարցաշարին ընդհանրապես որևէ պատասխան չեն տրամադրվել: Այնուամենայնիվ, մատուցվող ծառայությունների և դրանց ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը դեռևս չի կարող ապահովել արդյունավետ հանրային մասնակցություն, քանի որ ծառայությունների ընթացակարգերը բավարար կերպով մատչելի չեն հանրության համար: Մասնավորապես, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության դեպքում որպես ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր նշվել են նախարարության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները: Այս հանգամանքը, ինչպես նաև նախարարության կայքէջում նախարարության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ միասնական տեղեկատվության բացակայությունը, ի չիք են դարձնում հանրության համար կարևորագույն ծառայությունների տեսակների մասով տեղեկատվության ստացումը: Նախարարությունների կողմից մատուցվող ծառայությունների նկարագրերի մատչելիության տեսանկյունից եական է նաև հեշտ ընթեմնելի և հասկանալի լեզվով տեղեկատվության առկայությունը: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կայքէջի թույլտվությունների և լիցենզիաների ծառայություններ բաժնում³ տեղադրված են մեծ ծավալով իրավական փաստաթղթեր: Որպես լավ օրինակ կարելի է նշել նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կայքէջը,⁴ որտեղ տրամադրվող ծառայությունների ընթացակարգերը և փաստաթղթերը նկարագրված են հստակ և հակիրճ՝ ապահովելով համապատասխան իրավական ակտերին հղումներ:

Նախարարությունների կողմից վարվող վարչական ռեգիստրների⁵ առկայության մասին միայն նշել են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, աշխատանքի ու սոցիալական հարցերի, արդարադատության և տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարարությունները: Այնուամենայնիվ դրանցից ոչ մեկը հասանելի չեն ողջ ծավալով ու անվճար:

Չնայած նախարարությունների մեծամասնությունը նշել են գործունեության և առանձին ծրագրերի գնահատման հաշվետվությունների/զեկույցների մասին, այդուհանդերձ նախարարությունների կայքէջերի փորձագիտական խորքային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախարարությունների մեծամասնությունում առկա է թյուր ընկալում ընթացիկ և գնահատման զեկույցների/հաշվետվությունների վերաբերյալ: Եթե ընթացիկ զեկույցները վերաբերում են նախարարությանը վերապահված ոլորտային շրջանակներում իրականացված հիմնական աշխատանքներին, ապա գնահատման զեկույցները կենտրոնանում են աշխատանքի ազդեցության, արդյունավետության, ձեռքբերումների և թերացումների վրա, որոնք շատ հաճախ իրականացվում են արտաքին (ոչ պետական) դերակատարների կողմից առավել օբյեկտիվ պատկեր ստանալու նպատակով: Այս առումով հարկավոր է նշել, որ նախարարությունների կայքէջերից ոչ մեկում առկա չեն գնահատման հաշվետվություններ և զեկույցներ:

Խորհրդակցություն

Մասնակցության խորհրդակցության եղանակի համար գնահատման հիմք են հանդիսացել հետևյալ ցուցիչները.

³ <http://env.am/e-management/licenses-and-permits>

⁴ https://hti.am/main.php?lang=1&page_id=820, https://hti.am/main.php?lang=1&page_id=820


https://hti.am/main.php?lang=1&page_id=686

https://hti.am/main.php?lang=1&page_id=683

⁵ Վարչական ռեգիստրները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարվող անվանական՝ հասցեական տվյալների բազաներ (շտեմարաններ) են, որոնք հիմք են և հետևանք վարչական ներգործությունների համար:

- Քաղաքականության առաջնահերթությունների վերաբերյալ հանրային կարծիքի վերհանման մակարդակը, ներառյալ՝ նախապատրաստման փուլում քաղաքականության ոլորտներում խնդիրները վեր հանելու նպատակով հանրային կարծիքի հարցումների իրականացումը, դրանց հիման վրա իրավական ակտերի նախագծերի նախաձեռնումը, «Թեժ գիծ», «E-request», «Դիմեք մեզ» համակարգերի և այլ կապուղիների միջոցով խնդիրների վերհանումը:
- Քաղաքականության փաստաթղթերի (իրավական ակտերի) վերաբերյալ հանրային կարծիքի վերհանման մակարդակը, ներառյալ՝ մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրային կարծիքի հարցումները և դրանց հիման վրա նախագծերի լրամշակումը,
- Ծառայությունների որակի վերաբերյալ հանրային կարծիքի վերհանման մակարդակը, ներառյալ՝ մատուցվող ծառայությունների որակի գնահատման և հետադարձ կապի թղթային կամ առցանց հնարավորությունների առկայությունը,
- Քաղաքականությունների գնահատման հաշվետվությունների/զեկույցների վերաբերյալ հանրային կարծիքի վերհանման մակարդակը, ներառյալ՝ քաղաքականության փաստաթղթերի վերջնական գնահատման զեկույցներում կամ հաշվետարություններում հիմնական շահառուների, հանրության առանձին հատվածների կարծիքների ուսումնասիրությունն ու ներառումը, հանրային քննարկումների կազմակերպումը, քննարկումներին ներկայացված դիտողությունների և առաջարկությունների ներառումը, ինչպես նաև դրանց փաստաթղթավորումը:

Գծապատկեր 3. Մասնակցային կառավարման համաթիվը՝ ըստ խորհրդակցության եղանակի (առավելագույնը 52 բալ)



Մասնակցության գործընթացի համաթիվը՝ ըստ մասնակցության խորհրդակցության եղանակի (գծապատկեր 3) ցույց է տալիս, որ նախարարություններից միայն 2-ն (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների) են ապահովում 25-ից 33 տոկոսային մակարդակ: Սա նշանակում է, որ նույնիսկ 2 նախարարություններում մասնակցության խորհրդակցության գործընթացները իրականացվում

են մեկ երրորդով, որը բավարար համարել չի կարելի: Մյուս նախարարությունների մասով մասնակցության խորհրդակցության եղանակը, ըստ ելույթի կիրառելի չէ:

Քաղաքական օրակարգը որոշելիս «Թեժ գիծ», «E-request», «Դիմեք մեզ» համակարգերի և այլ կապուղիներով վեր հանված խնդիրների մասին նշել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, սակայն հիմնավորումների և հղումների բացակայության պատճառով հնարավոր չի եղել հաստատել տվյալները:

Նախապատրաստման փուլում նախարարությանը վերապահված քաղաքականության ոլորտներում խնդիրները վեր հանելու նպատակով հանրային կարծիքի հարցումների մասին նշել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և ֆինանսների նախարարությունները: Սակայն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դեպքում հղումների և հիմնավորումների բացակայության պատճառով հնարավոր չի եղել հաստատել տվյալները, իսկ Ֆինանսների նախարարության դեպքում որպես հիմնավորում նշվել են բյուջետային հայտերի վերաբերյալ նախաձեռնված հանրային քննարկումները: Հանրային կարծիքի ուսումնասիրությունների հիման վրա որևէ իրավական ակտի նախագիծ չի մշակվել:

Իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության վերաբերյալ նշել են միայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն իրականացվել է նախագծերի 50 տոկոսի դեպքում, սակայն հղումների և բացատրությունների/հիմնավորումների բացակայության պատճառով տվյալ թիվը ստուգել հնարավոր չի եղել: Իսկ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության դեպքում հանրային կարծիքի ուսումնասիրություն իրականացվել է բոլոր նախագծերի դեպքում, սակայն նախարարության տրամադրած հիմնավորումներում հղում է տրվում ՀՀ կառավարության կողմից օրենքների նախագծերը վերադարձնելու փաստին:⁶

Նախարարությունների կողմից մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ հանրային կարծիքի վերհանման մասին նշել են միայն ՀՀ ֆինանսների, աշխատանքի և սոցիալական հարցերի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները: Սակայն այս դեպքում ևս նախարարությունների տրամադրած հիմնավորումները ցույց են տալիս, որ նման համակարգ բացակայում է: Որպես տեղեկատվության աղբյուրի հղում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ներկայացրել է նախարարության կայքէջի օրենքների և որոշումների բաժինը, իսկ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը՝ կայքէջի հայտարարությունների և լիցենզավորման բաժինները: ՀՀ Ֆինանսների նախարարության դեպքում նշվել է, որ հետադարձ կապը ապահովվում է e-request համակարգով բողոքների ներկայացման դեպքում, որը ևս որակի վերահսկման գործիք չի հանդիսանում:

Նախարարությունների կողմից մշակված քաղաքականության փաստաթղթերի վերջնական գնահատման զեկույցներից կամ հաշվետվություններից որևէ մեկում հիմնական շահառուների, հանրության առանձին հատվածների կարծիքը չի ուսումնասիրվել: Այնուամենայնիվ, քաղաքականության փաստաթղթերի զեկույցների/հաշվետվությունների հանրային քննարկման մասին բարձրաձայնել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, բարձր տեխնոլոգիական

⁶ Նախարարության կողմից որպես հիմնավորում մասնավորապես նշվել է. «4 օրենքների նախագծերի փաթեթը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, սակայն հետ է վերադարձվել ռազմական դրությամբ պայմանավորված»:

արդյունաբերության, շրջակա միջավայրի և տարածքային կառավարման նախարարությունները: Սակայն նշված նախարարությունների տրամադրած պարզաբանումների փորձագիտական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկումները չեն առնչվել գնահատման զեկույցներին, այլ վերաբերել են ընդհանուր ոլորտային խնդիրներին (Շրջակա միջավայրի նախարարություն) և e-draft.am հարթակում տեղադրված իրավական ակտերի նախագծերին: Այստեղ պետք է ընդգծել, որ քաղաքականության փաստաթղթերի գնահատման զեկույցները/հաշվետվությունները չեն հանդիսանում իրավական ակտի նախագծեր և e-draft.am հարթակում չեն տեղադրվում: Ուստի քաղաքականության փաստաթղթերի գնահատման զեկույցների վերաբերյալ հանրային կարծիքի վերհանում վերոնշյալ նախարարությունների կողմից չեն իրականացվել, հետևաբար չէին կարող քննարկվել նաև առաջարկությունները և դիտարկումները, որոնց առկայության մասին նշել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Համագործակցություն

Մասնակցության համագործակցության եղանակի համար գնահատման հիմք են հանդիսացել հետևյալ ցուցիչները.

- Քաղաքականության առաջնահերթությունների սահմանման հանրային քննարկումների մակարդակ, ներառյալ՝ իրավական ակտերի նախագծերի մշակման և քննարկման նպատակով աշխատանքային կամ այլ ձևաչափով խմբերի և խորհուրդների ձևավորումը, տվյալ ձևաչափով խնդիրների վերհանումն ու դրանց ներառումը, հասարակական և հանրային խորհրդի քննարկումների կազմակերպումը, դրանցում ներկայացված խնդիրների և գաղափարների ներառումը նախագծերում, գիտահետազոտական և խորհրդատվական կազմակերպությունների միջոցով հետազոտությունների իրականացումը,
- Քաղաքականության փաստաթղթերի (իրավական ակտերի) նախագծերի հանրային քննարկումների և հետադարձ կապի ապահովման մակարդակ, ներառյալ՝ e-draft հարթակում քաղաքականության փաստաթղթերի, օրենքի և կառավարության որոշման նախագծերի քննարկման տևողությունը,
- Ծառայությունների որակի վերաբերյալ հանրային քննարկումների և հետադարձ կապի ապահովման մակարդակ, ներառյալ՝ հետադարձ կապով ծառայությունների որակի գնահատման համակարգերից ստացված դիտողություններին, բողոքներին և առաջարկություններին պատասխանը, ինչպես նաև դրանց ընդունումը նախարարության կողմից հետագա լուծման նպատակով:
- Քաղաքականությունների գնահատման հաշվետվությունների/զեկույցների հանրային քննարկման արդյունքների գործնականում կիրառման մակարդակ, ներառյալ՝ քաղաքականությունների կամ ծրագրերի վերջնական գնահատման զեկույցներում արտացոլված՝ հիմնական շահառուների դիտարկումների ու առաջարկների արդյունքներով իրավական ակտի վերանայումը:

Գծապատկեր 4. Մասնակցային կառավարման համաթիվը՝ ըստ համագործակցության եղանակի (առավելագույնը 56 բալլ)



Մասնակցության գործընթացի համաթիվը՝ ըստ համագործակցության եղանակի (գծապատկեր 4) ցույց է տալիս, որ նախարարություններից միայն 33 Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի ու Շրջակա միջավայրի նախարարություններն են, որ ապահովել են համագործակցության հարաբերականորեն բարձր՝ 21-ից 40 տոկոսային մակարդակ: Մյուս նախարարություններում համագործակցության հավասարապես ցածր մակարդակը պայմանավորված է նախարարություններում իրավական ակտերի նախագծերի միայն e-draft հարթակում հանրային քննարկման գործիքի պարտադիր կիրառման հանգամանքով:

Մասնավորապես, նախարարությունների մեծամասնությունը, որպես հիմք իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման ժամկետ է նշել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33 օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նվազագույնը 15 օրյա ժամկետը, որը ծավալուն նախագծերի դեպքում հանրային քննարկումը դարձնում է անարդյունավետ և սահմանափակում նախագծին համապարփակ ծանոթանալու հնարավորությունը: E-draft.am էլեկտրոնային հարթակում հանրային քննարկումների մասին որևէ պատասխան չեն նշել 33 առողջապահության և աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունները: E-draft.am հարթակում 1 ամիս և ավելի ժամկետով հանրային քննարկումների նախաձեռնման մասին նշել են միայն 33 արտակարգ իրավիճակների, շրջակա միջավայրի և ֆինանսների նախարարությունները:

Նախարարությանը վերապահված քաղաքականության ոլորտներում խնդիրները վեր հանելու, իրավական ակտերի նախագծերի մշակման և քննարկման նպատակով 2020 թվականին շահառու քաղաքացիների, մասնավոր հատվածի, գիտահետազոտական, խորհրդատվական կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավմամբ համատեղ աշխատանքային կամ այլ ձևաչափով խմբերի և խորհուրդների ձևավորման գործիքի կիրառման մասին նշել է միայն 33 կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությունը: Ըստ նախարարության, ձևավորվել է 1 աշխատանքային խումբ «Երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակման նպատակով: Համաձայն նախարարության կողմից տրամադրված

տվյալների՝ աշխատանքային խմբի կողմից վեր է հանվել ընդամենը 1 խնդիր, որը նախարարության կողմից չի ընդունվել:

2020 թվականի ընթացքում հանրային քննարկումների ձևաչափերով (հանրային լսումներ, կլոր-սեղան, ֆոկուս խմբային քննարկումներ և այլն, բացառությամբ e-draft-ի) նախարարության ոլորտային քաղաքականությունների խնդիրներին վերաբերող առաջարկներ ստացվել է միայն 33 աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Ըստ նախարարության, ներկայացվել է 13 առաջարկություն, որոնք ամբողջությամբ ընդունվել են, սակայն հիմնավորումների և հղումների բացակայության պատճառով այս փաստը հաստատել հնարավոր չի եղել:

2020 թվականի ընթացքում նախարարին կից հասարակական խորհրդի նիստեր կազմակերպել են միայն 33 արտակարգ իրավիճակների (2 նիստ) և կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությունները (1 նիստ): Մյուս նախարարությունները, որպես հիմնական պատճառաբանություն, նշել են կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սահմանափակումները, որոնք անհնարին են դարձրել նիստերի կազմակերպումը՝ չնայած առցանց հանդիպումների կազմակերպման առկա հնարավորություններին (օր.՝ zoom հարթակը): Ըստ նույն նախարարությունների, նախարարին կից հասարակական խորհրդի նիստերի ընթացքում նոր խնդիրներ ու գաղափարներ չեն ներկայացվել:

Հանրային խորհրդի կողմից նախարարությունների քաղաքականության ոլորտներին վերաբերող խնդիրներ ու նոր գաղափարներ նույնպես չեն ներկայացվել:

Գիտահետազոտական ու խորհրդատվական կազմակերպություններին հետազոտությունների պատվիրման 1 դեպքի մասին նշել է միայն 33 կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Ըստ նախարարության՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2021-2025 թվականների ռազմավարությունը և ռազմավարության գործողությունների պլանը հաստատելու մասին» 33 կառավարության որոշման նախագիծը, ներկայացվել է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի քննարկմանը, որը փորձագիտական գնահատումների չի կարող ճանաչվել որպես գիտահետազոտական կամ խորհրդատվական աշխատանք:

Ծառայությունների մատուցման որակի գնահատման տեսանկյունից միայն 33 կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է նշել, որ 2020 թ. ծառայությունների որակի գնահատման համակարգերից լիցենզավորման բաժնում ստացել է թվով 7 դիտողություն, բողոք ու առաջարկություն, որոնք ամբողջությամբ ընդունվել են, և որոնց հիման վրա իրականացվել է իրավական ակտի վերանայում: Այնուամենայնիվ, հղումների և հիմնավորումների բացակայությունների պատճառով նշված տվյալները նույնպես հաստատել չի հաջողվել:

Ակտիվ ներգրավում

Մասնակցության ակտիվ ներգրավման եղանակի համար գնահատման հիմք են հանդիսացել հետևյալ ցուցիչները .

- Քաղաքականության առաջնահերթությունների սահմանման մակարդակ՝ անհատական և կոլեկտիվ հանրագրերի միջոցով,
- Քաղաքականության փաստաթղթերի (իրավական ակտերի) նախագծերի անհատական և կոլեկտիվ հանրագրերի և հանրաքվեների միջոցով որոշումների կայացման մակարդակ,

- Ծառայությունների մատուցման պետություն-մասնավոր հատված - ԶՅԿ-եր համագործակցության մակարդակ,
- Քաղաքականությունների ազդեցության գնահատման հաշվետվությունների/զեկույցների պատվիրակման մակարդակ:

Գծապատկեր 5. Մասնակցային կառավարման համաթիվը՝ ըստ ակտիվ ներգրավման եղանակի (առավելագույնը 20 բալ)



Մասնակցության գործընթացի համաթիվը՝ ըստ ակտիվ ներգրավման եղանակի (գծապատկեր 5) ցույց է տալիս, որ գրեթե բոլոր նախարարություններում բացակայում է տվյալ գործիքի կիրառման պրակտիկան: Միայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարարություններն են ապահովել ակտիվ ներգրավում՝ 20 տոկոսային կետի սահմաններում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որպես ակտիվ ներգրավման գործիք նախարարության կողմից ծառայությունների մի մասի պատվիրակել է մասնավոր ընկերություններին, իսկ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը՝ ոլորտային քաղաքականությունների, ծրագրերի վերջնական գնահատման գործընթացի կազմակերպումն ու զեկույցների մշակումը իրականացրել է մասնավոր խորհրդատվական կազմակերպությունների և ընկերությունների միջոցով:

Այնուամենայնիվ, նախարարությունների կողմից տրամադրված հղումներն ու բացատրությունները հնարավորություն չեն տալիս հաստատելու նման պնդումները: Ավելին, նույն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից լրացված հարցաշարի պատասխաններում ակնհայտ է տրամաբանական հակասություն, այն է՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով նախարարությանը վերապահված ոլորտներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հանրությանը մատուցված ծառայությունների թիվը կազմել է 11, որոնցից, ըստ նախարարության, 56-ը պատվիրակվել են մասնավոր հատվածին: Որպես հիմնավորում նախարարությունը հղում է կատարել նախարարության կայքէջի որոնողական բաժնի «պայմանագրեր» բառով որոնման գործիքին, որի արդյունքները չեն հավաստում նման քանակական գնահատումները, և չեն


ներկայացնում նախարարության կողմից ծառայությունների մատուցման պատվիրակման պայմանագրերի մասին տվյալները:⁷

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՓՈՒԼՆԵՐԻ

Մասնակցային կառավարման համաթվի գնահատման գործընթացում քաղաքականության մշակման և իրականացման շրջափուլերում մասնակցության գնահատումը կատարվել է ըստ հետևյալ ցուցիչների.

Քաղաքականության առաջնահերթությունների սահմանում

Գծապատկեր 6. Մասնակցային կառավարման համաթիվը՝ ըստ քաղաքականության առաջնահերթությունների սահմանման շրջափուլի (առավելագույնը 76 բալ)



Մասնակցության գործընթացի համաթիվը՝ ըստ քաղաքականության առաջնահերթությունների սահմանման շրջափուլի (գծապատկեր 6) ցույց է տալիս, որ համաձայն նախարարությունների կողմից ներկայացված տվյալների, քաղաքականության առաջնահերթությունների սահմանման շրջափուլում մասնակցության գործընթացները ՀՀ Էկոնոմիկայի, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, Աշխատանքի ու սոցիալական հարցերի և ԿԳՄՍ նախարարությունների կողմից իրականացվում են 19.8-ից 38.1 տոկոսային կետի շրջանակներում: Այդուհանդերձ, նախարարությունների կողմից հարցաշարի պատասխանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախարարությունների մեծ մասում առկա է թյուրընկալում քաղաքականության առաջնահերթությունների սահմանման շրջափուլի վերաբերյալ: Մասնավորապես, քաղաքականության առաջնահերթությունների սահմանման շրջափուլում գնահատումը կենտրոնանում է նախքան քաղաքականություն մշակելը ոլորտում առկա խնդիրների վերհանման, առաջնահերթությունների սահմանման և հրապարակման, դրանց վերաբերյալ հանրային կարծիքի բացահայտման և քննարկումների ծավալման, ինչպես նաև հանրային մասնակցության միջոցով առաջնահերթությունների սահմանման վրա: Քաղաքականության առաջնահերթությունների սահմանման փուլում հանրային մասնակցության կարևորությունը


⁷ Նշված տվյալների անհամապատասխանությունը պայմանավորված է ՀՀ ԱՍՀՆ կայքէջի «պայմանագրեր» որոնման գործիքի միջոցով ստացված նախարարության կողմից կնքված բոլոր պայմանագրերի մասին տվյալներով, որոնք չեն համապատասխանում հարցաշարով պահանջվող քաղաքականության մշակման գործընթացով պայմանավորված կնքված պայմանագրերի տվյալների շրջանակին:
<https://www.mlsa.am/?s=%D5%BA%D5%A1%D5%B5%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%A5%D6%80&paged=3>

կայանում է նրանում, որ հանրությունը նախքան իրավական ակտերի նախագծերի մշակումը, հնարավորություն ունի ներկայացնելու և քննարկելու քաղաքականության խնդիրները, մասնակցելու դրանց առաջնահերթությունների մշակմանը, որն էական ազդեցություն է ունենում քաղաքականության ձևակերպման և որոշումների հետագա կայացման վրա:

Այսինքն, քաղաքականության առաջնահերթությունների սահմանման գործընթացը նախորդում է քաղաքականության ձևակերպման և որոշումների կայացման փուլին, որի պայմաններում իրականացվում է բուն իրավական ակտի նախագծի մշակումը: Սակայն, գրեթե բոլոր նախարարությունները քաղաքականության առաջնահերթությունների սահմանման փուլը (իրավաստեղծ) նույնականացնում են իրավական ակտերի արդեն իսկ պատրաստի նախագծերի (իրավակազմավորման) քննարկման փուլի հետ: Նման պատկերն ակնհայտ է նախարարություններից ստացված հարցաշարի պատասխաններից, որտեղ որպես տեղեկատվության հիմնական աղբյուր նշվում է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքը, որում հանրային քննարկման նպատակով տեղադրվում են իրավական ակտերի պատրաստի նախագծերը: Այլ խոսքով, հանրային մասնակցությունը սկսվում է միայն իրավական ակտի նախագծի մշակումից և հրապարակումից հետո: Հանրային մասնակցության ձևավորված նման պրակտիկան սահմանափակում է իրավական ակտի նախագծում հայեցակարգային և բովանդակային փոփոխություններ կատարելու հնարավորությունները՝ շատ հաճախ հանրային մասնակցության ինստիտուտին վերապահելով առավել ձևական և խորհրդանշական բնույթ:

Քաղաքականության ձևակերպում և որոշումների կայացում

Գծապատկեր 7. Մասնակցային կառավարման համաթիվը՝ ըստ քաղաքականության ձևակերպման և որոշումների կայացման շրջափուլի (առավելագույնը 68 բալ)



Մասնակցության գործընթացի համաթիվը՝ ըստ քաղաքականության ձևակերպման և որոշումների կայացման շրջափուլի (գծապատկեր 7) ցույց է տալիս, որ բոլոր նախարարությունները այս կամ այն չափով կիրառում են քաղաքականության ձևակերպման ու որոշումների կայացման շրջափուլի պահանջները՝ 4.0-ից 58.8 տոկոսային կետի միջակայքում:

Չնայած նախարարությունների միջև քաղաքականության ձևակերպման և որոշումների կայացման մակարդակների առկա տարբերություններին՝ անհրաժեշտ է նշել, որ դրա իրականացումը պայմանավորված է քաղաքականության ձևակերպման և որոշումների կայացման օրենսդրական⁸ կարգավորումներով, որով սահմանված են նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման պահանջները և կարգը: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջների օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են հանրային քննարկման, բացառությամբ միջազգային պայմանագրի վավերացման (դրան միանալու) մասին օրենքի նախագծերի, իսկ այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հանրային քննարկման կարող են դրվել նախագիծը մշակող կամ այն ընդունող մարմնի նախաձեռնությամբ:

Այնուամենայնիվ, նախարարություններից ստացված հարցաշարի պատասխանների որակական վերլուծությունը վկայում է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 9-րդ կետով⁹ ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում հանրային քննարկումների առնվազն 15 օր տևողության սահմանում՝ եթե հանրային քննարկում իրականացնող մարմինը չի սահմանել ավելի երկար ժամկետ, բավարար չէ մեծածավալ և հայեցակարգային նախագծերի վերաբերյալ հանրության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կառույցների կողմից դիտարկումներ/ առաջարկություններ կատարելու նպատակով: Տվյալ դեպքում իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների համար խիստ սահմանափակ ժամկետով հրապարակումը հնարավորություն չի ընձեռում ապահովել արդյունավետ և համապարփակ հանրային մասնակցություն:

Նախարարություններից ստացված հարցաշարի պատասխաններից ակնհայտ է դառնում, որ հանրային քննարկումների 15 օրյա ժամկետը նախարարությունների ճշող մեծամասնության համար համարվում է ուղենշային՝ առանց հաշվի առնելու իրավական ակտի նախագծի ծավալները: Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման մեկ ամիս և ավելի ժամկետով հրապարակման անհրաժեշտության մասին են նշել ՀՀ Արտակարգ իրավիճակների և Շրջակա միջավայրի նախարարությունները:


ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում քաղաքականության փաստաթղթերի նախագծերի քննարկման արդյունքների հետադարձ կապի ապահովման տեսանկյունից խնդրահարույց է նաև հանրային քննարկումների արդյունքներով ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հետագա կիրարկման մասին տեղեկատվության ստացումը: Մասնավորապես, դժվար է սահմանազատել «ի գիտություն» ընդունված առաջարկությունների կարգավիճակը, պարզել «ամբողջությամբ և մասնակի ընդունված» առաջարկությունների հետագա ներառումը իրավական ակտի նախագծի վերջնական տարբերակներում, քանի որ առկա չէ որևէ պարզաբանում, թե ինչպիսի հստակ փոփոխությունների են հանգեցրել ներկայացված առաջարկությունները: Բացի այդ, գրեթե անհնար է պարզել, թե արդյոք ներկայացված առաջարկությունների արդյունքում կատարվել են խմբագրական, թե խորքային կամ բովանդակային փոփոխություններ:

⁸ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120733>

⁹ ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=126002>

Քաղաքականության իրականացում

Գծապատկեր 8. Մասնակցային կառավարման համաթիվը՝ ըստ քաղաքականության իրականացման շրջափուլի (առավելագույնը 44 բալ)




Մասնակցության գործընթացի համաթիվը՝ ըստ քաղաքականության իրականացման շրջափուլի (գծապատկեր 8) ցույց է տալիս, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի, արտաքին գործերի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, ԿԳՄՄՆ, շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և ֆինանսների նախարարությունները ապահովել են հանրային ծառայությունների, վարչական ռեգիստրների, նախարարության գործունեության մոնիթորինգի զեկույցների հասանելիություն 27.7-ից 68.1 տոկոսային կետի միջակայքում: Համաձայն նախարարություններից ստացված հարցաշարի պատասխանների, բոլոր նախարարությունների գործունեության մոնիթորինգի զեկույցները հիմնականում (բացառությամբ՝ ՀՀ Արդարադատության¹⁰ և Առողջապահության նախարարությունների) հրապարակված են նախարարությունների կայքէջերում: Դրանք հասանելի են օգտագործման և վերաօգտագործման համար:

Նախարարությունների կողմից մատուցվող ծառայությունների և դրանց ընթացակարգերի մասին տեղեկատվությունը հիմնականում հասանելի է կայքէջերում: Սակայն որոշ դեպքերում հնարավոր չի եղել հստակեցնել մատուցվող ծառայությունների քանակը և նկարագրերը, քանի որ ՀՀ Առողջապահության, Էկոնոմիկայի, Արդարադատության և Տարածքային կառավարման նախարարությունների դեպքում տվյալներ չեն արձանագրվել:

Քաղաքականության ազդեցության գնահատում

¹⁰ Չնայած Արդարադատության նախարարության կողմից հարցաշարում որևէ պատասխան չի նշվել, նախարարության կայքէջի «Հավելվածություններ» բաժնում կարելի է գտնել, օրինակ, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրի մոնիթորինգի հաշվետվությունը, որի մասին նախարարությունը հարցաշարում որևէ նշում չի կատարել:

Գծապատկեր 9. Մասնակցային կառավարման համաթիվը՝ ըստ քաղաքականության ազդեցության գնահատման շրջափուլի (առավելագույնը 40 բալ)




Մասնակցության գործընթացի համաթիվը՝ ըստ քաղաքականության ազդեցության գնահատման շրջափուլի (գծապատկեր 9) ցույց է տալիս, որ միայն 4 (ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, աշխատանքի և սոցիալական հարցերի, ֆինանսների և ԿԳՄՍ) նախարարություններ են արձանագրել 20-40 տոկոսային միջակայքում քաղաքականությունների գնահատման հաշվետվությունների/զեկույցների հասանելիություն, դրանց վերաբերյալ հանրային կարծիքի վերհանման հնարավորություն, ստացված կարծիքները գործնականում կիրառման և ազդեցության գնահատման հաշվետվությունների մշակման պատվիրակում մասնավոր կամ ԶՀ կազմակերպություններին: Այդուհանդերձ, նախարարությունների կողմից հարցաշարին տրամադրված պատասխանների հիմնավորումները վկայում են, որ նախարարությունների կողմից ոլորտային քաղաքականությունների և գործունեության գնահատման 2020 թ. զեկույցներ/հաշվետվություններ չեն հրապարակվել: Քաղաքականությունների ազդեցության գնահատման հաշվետվություններն/զեկույցները սխալմամբ նույնականացվել են նախարարության գործունեության տարեկան հաշվետվությունների, ռազմավարությունների և դրանցից բխող միջոցառումների ծրագրերի կատարողականի հաշվետվությունների հետ: Միայն ՀՀ արտաքին գործերի նախարարությունն է նշել ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության տարեկան հաշվետվությունների գնահատման զեկույցների ամկայության մասին, որոնց վերաբերյալ նախարարության կայքէջում որևէ հղում հնարավոր չէ գտնել: Քաղաքականության ազդեցության գնահատման զեկույցների բացակայությունը հնարավորություն չեն տալիս վերլուծելու հանրությանը դրանց հասանելիության և մատչելիության, ինչպես նաև հաշվետվություն/ զեկույցների քննարկման արդյունքների կիրառման իրական մակարդակը:

ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄ

Հանրային մասնակցության ապահովման տեսանկյունից հարցաշարը անդրադարձել է նաև խոցելի խմբերի ներառականության խնդիրներին: Մասնավորապես, փորձ է արվել հասկանալու հաշմանդամություն ունեցող և ազգային փոքրամասնությունների ներգրավման մակարդակը նախարարությունների կողմից ձևավորված աշխատանքային և այլ ձևաչափով խմբերում, նախարարին կից հասարակական խորհուրդներում, ինչպես նաև պարզաբանելու, թե որքանով են նախարարության կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի դրույթները փորձաքննվել խոցելի խմբերի տեսանկյունից: Գնահատվել է նաև նախարարությունների կողմից պաշտոնական կայքէջերում և սոցիալական ցանցերում հրապարակված տեսանյութերում սուրդոթարգմանության կամ տիտրերի, ինչպես նաև տեքստերում ձայնային ուղեկցության առկայությունը:

Խոցելի խմբերի մասնակցության նպատակով հարցաշարում ներառվել է թվով 7 հարցեր:

Գծապատկեր 10. Մասնակցային կառավարման համաթիվը՝ ըստ խոցելի խմբերի ներառականության ապահովման (առավելագույնը 4 բալլ)



Մասնակցության գործընթացի համաթիվը՝ ըստ խոցելի խմբերի ներառականության (գծապատկեր 10) ցույց է տալիս, որ նախարարությունների մեծամասնությունում այն գտնվում է 0-25 տոկոսային կետի միջակայքում, որը հավասարազոր է «բացակայում է» գնահատականին:

Միայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից է ապահովվել խոցելի խմբերի մասնակցության գործիքների կիրառման առավելագույն սահմանված բալերի նկատմամբ 50 տոկոսային կետի մակարդակ: Մնացած նախարարությունների մասով դրանք ցածր են կամ հավասար են նվազագույն սահմանված մակարդակին: Այսպես, նախարարությունների պաշտոնական կայքէջերում և սոցիալական ցանցերում հրապարակված նյութերում սուրդոթարգմանության, տիտրերի կամ ձայնային ուղեկցումների առկայության մասին են նշել ՀՀ Արտակարգ

իրավիճակների, շրջակա միջավայրի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ինչպես նաև արտաքին գործերի նախարարությունները: Այդուհանդերձ, հղումների բացակայության պատճառով պատասխանները փորձագետների կողմից հնարավոր չի եղել հաստատել:

Նախարարին կից հասարակական խորհուրդներում խոցելի խմբերը մասնակի են ընդգրկված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների դեպքում: Աշխատանքային կամ այլ ձևաչափով աշխատանքային խմբերում խոցելի խմբերի մասնակի ընդգրկվածության մասին նշել են նաև ՀՀ պաշտպանության ու կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները:¹¹

Իրավական ակտերի նախագծերի՝ խոցելի խմբերի տեսանկյունից, փորձաքննության մասին նշել է միայն ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ հղում կատարելով նախարարության Գիտության կոմիտեում 2020 թ. փետրվարի 25-ին տեղի է ունեցած ԵՄ փորձագետների մասնակցությամբ «Գենդերային զգայուն բյուջետավորում» թեմայով աշխատանքային քննարկման արդյունքներին:

¹¹ Հարկավոր է ընդգծել, որ այլ նախարարություններում խոցելի խմբերի ներգրավվածությունը կարող է պայմանավորված լինել նման աշխատանքային խմբերի բացակայության հանգամանքով:

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ


Համաձայն մասնակցային կառավարման համաթվի հաշվարկման մեթոդաբանության, մասնակցային կառավարման ընդհանուր համաթիվը ձևավորվում է տեղեկատվության տրամադրման, խորհրդակցության, համագործակցության և ակտիվ ներգրավման մասնակցային ենթափուլերից, որոնց բալերի առավելագույն հանրագումարը՝ ըստ հարցաշարերի գնահատումների կազմում է 228:

Աղյուսակ 3. Մասնակցության գործընթացի համաթվի վարկանիշային աղյուսակ

	Նախարարություն	Արժեք/բալերի մեծությունը	Համաթվի մեծությունը
1.	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	105	46
2.	Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն	65	28.5
3.	Շրջակա միջավայրի նախարարություն	64	28
4.	Ֆինանսների նախարարություն	60	26.3
5.	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	59	25.8
6.	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	45	19.7
7.	Էկոնոմիկայի նախարարություն	35	15.3
8.	Արտաքին գործերի նախարարություն	34	14.9
9.	Արտակարգ իրավիճակների նախարարություն	21	9.2
10.	Արդարադատության նախարարություն	7	3.1
11.	Պաշտպանության նախարարություն	6	2.6
12.	Առողջապահության նախարարություն	0	0

Մասնակցային կառավարման համաթվի վարկանիշային աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ համաթվի մեծությունը ՀՀ նախարարություններում շատ ցածր է՝ տատանվում է առավելագույն մակարդակի 0-46 տոկոսի միջակայքերում: Սա նշանակում է, որ նախարարությունների կողմից քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում ընդհանուր առմամբ չեն ապահովվել քաղաքացիական հասարակության մասնակցության գործընթացները, իսկ մի շարք նախարարությունների կողմից «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավական ակտերի նախագծերի հրապարակման և «e-draft» էլեկտրոնային համակարգով կարծիքների ստացման վերաբերյալ պահանջները:


Գծապատկեր 11. Մասնակցային կառավարման համաթիվը՝ ըստ ՀՀ նախարարությունների (առավելագույնը 228 բալ)



2020 թ. վերաբերյալ ՀՀ նախարարություններից ստացված հարցաշարների պատասխանների գնահատումների վերլուծությունը (Գծապատկեր 11) ցույց է տալիս, որ 12 նախարարություններից և ոչ մեկը չի ապահովել մասնակցության համաթվի առավելագույն գնահատման աստիճանը, որը ենթադրում է, որ ամբողջությամբ չեն իրականացվում մասնակցության 4 փուլերի համար նախատեսված գործընթացներն ու չեն կիրառվում մասնակցության գործընթացը ապահովող գործիքակազմերը:

Մասնակցության ամենաբարձր մակարդակն ապահովվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Այնուամենայնիվ մտահոգություն է առաջացնում մասնակցության մակարդակների զգալի տարբերությունները նախարարությունների միջև (օրինակ՝ 105 միավոր ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դեպքում և 0 միավոր՝ ՀՀ Առողջապահության նախարարության դեպքում): Նկատի ունենալով, որ բոլոր նախարարություններում քաղաքականության մշակման աշխատանքները կարգավորվում են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, ապա առնվազն տարօրինակ է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից ստացված տվյալների պատկերը, որը 2020 թ. ԶՈՎԻԴ - 19 համավարակի և արցախյան պատերազմի ընթացքում եղել է քաղաքականության մշակման և իրականացման ամենակտիվ կառույցներից մեկը: Համանման իրավիճակ է նաև ՀՀ Արդարադատության նախարարության դեպքում, որը հանդիսանում է ՀՀ կառավարության քաղաքականության օրենսդրական կարգավորումների մշակման հիմնական օղակ և ապահովում է արդարադատության համակարգի, քրեակատարողական, նոտարական, հարկադիր կատարման, իրավաբանական անձանց պետական գրանցման և նոտարական ծառայությունների ու հակակոռուպցիոն քաղաքականության մշակումն ու իրականացումը:

Գծապատկեր 12. Մասնակցային կառավարման համաթիվը՝ ըստ մասնակցության առանձին եղանակների




Մասնակցային կառավարման համաթվի գնահատումները՝ մասնակցության առանձին փուլերում (Գծապատկեր 12), ցույց է տալիս, որ նախարարությունների կողմից հիմնականում ապահովվել է մասնակցության **տեղեկատվության տրամադրման** փուլի պահանջները: Սա նշանակում է, որ նախարարությունների կողմից ոլորտային քաղաքականությունների և գործունեության վերաբերյալ հաշվետվությունները և նորմատիվ իրավական ակտերը հիմնականում հասանելի են եղել հանրությանը կայքէջի միջոցով՝ օգտագործման և վերաօգտագործման համար: Այդուհանդերձ, նախարարությունների կայքէջերի փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կայքէջերում բացակայում են նախարարությունների կողմից ոլորտային քաղաքականությունների և գործունեության վերաբերյալ հաշվետվությունների, հայեցակարգերի, ռազմավարությունների վերաբերյալ հանրության և քաղաքացիական հասարակության միավորումների կողմից առաջարկություններ ու նկատառումներ ներկայացնելու և հետադարձ կապ ապահովելու մեխանիզմներն ու գործիքակազմերը:

Նախարարություններում մասնակցության գործընթացի առավել կայացած փուլերից է **համագործակցությունը**, որը պայմանավորված է իրավական ակտերի նախագծերի e-draft.am հարթակի միջոցով հանրային մասնակցության ապահովման գործիքի կիրառման օրենսդրորեն սահմանված պահանջի ապահովմամբ: Սակայն այլ է պատկերը **մասնակցության խորհրդակցության և ակտիվ ներգրավման** փուլերի համար: Մասնակցության խորհրդակցության փուլում նախարարությունների ճշող մեծամասնության կողմից հարաբերականորեն բարձր բալրերի արձանագրումը պայմանավորված է e-draft.am հարթակում իրավական ակտերի նախագծերի տեղադրումը և դրանց որպես հանրային քննարկման գործիք դիտարկումը:

Մասնակցության **ակտիվ ներգրավման** տեսանկյունից հարկավոր է նշել, որ պետություն-մասնավոր հատված - քաղաքացիական հասարակության կառույցների համագործակցություն գրեթե չի արձանագրվել: Նախարարություններից միայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է նշել մասնավոր հատվածին և քաղաքացիական

հասարակությանը պետական որոշ ծառայությունների պատվիրակման մասին, իսկ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության դեպքում, զեկույցների մշակումն իրականացվել է քաղաքացիական հասարակության, խորհրդատվական ընկերությունների կամ մասնավոր հատվածի կազմակերպությունների կողմից:

Գծապատկեր 13. Մասնակցային կառավարման համաթիվը՝ ըստ քաղաքականության շրջափուլերի



Մասնակցային կառավարման համաթվի գնահատումները՝ քաղաքականության մշակման և իրականացման առանձին շրջափուլերում (գծապատկեր 13), ցույց են տալիս, որ **քաղաքականության առաջնահերթությունների սահմանման** շրջափուլը առավել կիրառելի է նախարարությունների կողմից: Այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ նախարարությունների կողմից տրամադրված տվյալների և իրական պատկերի միջև առկա է էական տարբերություններ, որոնք պայմանավորված են քաղաքականության առաջնահերթությունների սահմանման շրջափուլի պահանջների ընկալման տարբերություններով: Ինդիքը այն է, որ այս շրջափուլում շեշտը դրվում է քաղաքականություն մշակելուց առաջ կոնկրետ ոլորտում առկա խնդիրների և առաջնահերթությունների հանրային իրազեկման, հանրային կարծիքի վերհանման, հանրագրերի միջոցով առաջնահերթությունների սահմանման վրա: Սակայն բոլոր նախարարությունները այս շրջափուլը նույնականացրել են քաղաքականության ձևակերպման և որոշումների կայացման շրջափուլի պահանջների հետ, երբ քաղաքականության սահմանված առաջնահերթությունների հիման վրա արդեն իսկ մշակված իրավական ակտի նախագիծը քննարկման նպատակով տեղադրվում է e-draft.am հարթակում:

Նախարարությունները որոշակի աշխատանք են կատարում **քաղաքականության ձևակերպման և որոշումների կայացման գործընթացում**, որը արտահայտվում է քաղաքականության մշակված փաստաթղթերի նախագծերի e-draft.am հարթակի միջոցով

հասանելիությունը, նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների և հետադարձ կապի ապահովումը: Այնուամենայնիվ, հանրային կարծիքի վերհանման նպատակով հետադարձ կապի ապահովման, ինչպես նաև անհատական և կոլեկտիվ հանրագրերի և հանրաքվեների միջոցով որոշումների կայացման հնարավորությունները բացակայում են:

Քաղաքականության իրականացման շրջափուլում նախարարություններում հիմնականում ապահովվում է վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և իրականացվում է վարչական ռեգիստրների վարումը: Այդուհանդերձ, նախարարությունների կողմից մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ հանրային կարծիքի վերհանումը, հետադարձ կապի ապահովումը ծառայություններից օգտվող անձանց շրջանում մնում է խնդրահարույց: Կայացման կարիք ունի մատուցվող ծառայությունների պատվիրակումը մասնավոր հատվածին կամ քաղաքացիական հասարակությանը միավորումներին:

Քաղաքականության ազդեցության գնահատման շրջափուլում նախարարությունների ոլորտային քաղաքականությունների ազդեցության գնահատման մասին հիշատակել են միայն Ֆինանսների, աշխատանքի և սոցիալական հարցերի և ԿԳՄՍ նախարարությունները, որոնց պատասխանների խորքային և փորձագիտական վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանք վերաբերում են նախարարությունների գործունեության տարեկան հաշվետվություններին, այլ ոչ թե գործունեության կամ առանձին ծրագրերի գնահատման հաշվետվություններին կամ զեկույցներին:

Նախարարությունների գործունեության գնահատման հաշվետվությունների/զեկույցների հասանելիության ապահովման, դրանց գնահատման վերաբերյալ հանրային կարծիքի վերհանման, հանրային քննարկումների արդյունքները գործնականում կիրառման և հաշվետվությունների/զեկույցների մշակման գործընթացի պատվիրակումը մասնավոր ընկերություններին և քաղաքացիական հասարակության կառույցներին մասնակցային գործիքները նախարարությունները չեն կիրառում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախարարություններից ստացված հարցաշարի պատասխանների վերլուծության հիման վրա հաշվարկված մասնակցային կառավարման համաթվի՝ ըստ մասնակցության եղանակների, քաղաքականության մշակման շրջափուլերի և ամփոփ գնահատականները վկայում են, որ մասնակցային կառավարման մակարդակը ՀՀ նախարարություններում շատ ցածր է՝ տատանվում է առավելագույնի 0-46 տոկոսային միջակայքերում:

Նախարարությունների կողմից քաղաքականության նախապատրաստման, մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում, ընդհանուր առմամբ, չեն պահպանվում հանրային մասնակցության միջազգայնորեն սահմանված՝ **հանրությանը տեղեկատվության տրամադրման, խորհրդակցության, համագործակցության և ակտիվ ներգրավման** համար նախատեսված գործընթացներն ու կիրառվող գործիքակազմերը:

Ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ

- Նախարարությունների կողմից հիմնականում իրականացվում է մասնակցության գործընթացի **տեղեկատվության տրամադրման** պահանջները, որում ապահովվում է նորմատիվ իրավական ակտերի հասանելիությունը հանրությանը՝ կայքէջերի միջոցով:
- Մասնակցության գործընթացի առավել կայացած փուլերից է **համագործակցությունը**, որը պայմանավորված է իրավական ակտերի նախագծերի e-draft.am հարթակի միջոցով հանրային մասնակցության ապահովման գործիքի կիրառման օրենսդրորեն սահմանված պահանջով:
- Մասնակցության **խորհրդակցության և ակտիվ ներգրավման** եղանակներից՝ հանրային կարծիքի վերհանման և պետություն-մասնավոր հատված - քաղաքացիական հասարակության կառույցների համագործակցություն գրեթե չի արձանագրվել:
- Նախարարությունների կողմից հանրային ներգրավումն առավել կիրառելի է **քաղաքականության ձևակերպման և որոշումների կայացման** շրջափուլում, որտեղ ապահովվում է քաղաքականության արդեն իսկ մշակված փաստաթղթերի նախագծերի e-draft.am հարթակի միջոցով հասանելիությունը, նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների և հետադարձ կապի ապահովումը:
- **Քաղաքականության իրականացման** շրջափուլում նախարարություններում հիմնականում ապահովվում է վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և իրականացվում է վարչական ռեզիստրների վարումը:
- **Քաղաքականության առաջնահերթությունների սահմանման** շրջափուլը նախարարությունների կողմից չի ընկալվում և այն, ըստ հարցաշարի պատասխանների, նույնացվում է **քաղաքականության ձևակերպման և որոշումների կայացման** շրջափուլի պահանջների հետ, երբ քաղաքականության սահմանված առաջնահերթությունների հիման վրա արդեն իսկ մշակված իրավական ակտի նախագծերը քննարկման նպատակով տեղադրվում են e-draft.am հարթակում:
- **Քաղաքականության ազդեցության գնահատման շրջափուլում** նախարարությունների մասնակցային գործունեության գնահատման՝ հաշվետվությունների/զեկույցների հասանելիության ապահովման, դրանց գնահատման վերաբերյալ հանրային կարծիքի վերհանման, հանրային քննարկումների արդյունքները գործնականում կիրառման և հաշվետվությունների/զեկույցների մշակման գործընթացի պատվիրակումը մասնավոր ընկերություններին և քաղաքացիական հասարակության կառույցներին, գործիքները նախարարությունները չեն կիրառում:
- Մասնակցության գործընթացը հաճախ ձևական է: Մասնավորապես, **քաղաքականության մշակման և իրականացման շրջափուլում** մասնակցային

գործընթացը ապահովող գործիքների՝ հանրային կարծիքի հարցումների, «Թեժ գիծ», «E-request», «Դիմեք մեզ», անհատական և կոլեկտիվ հանրագրերի համակարգերի և այլ կապուղիներով, հանրային քննարկումների ձևաչափերով (հանրային լուսմներ, կլոր-սեղան, ֆոկուս խմբային քննարկումներ և այլն, բացառությամբ e-draft-ի), նախարարին կից հասարակական խորհուրդների, հանրային խորհրդի կառույցների միջոցով ստացված տեղեկատվությունը և առաջարկությունները, հիմք չեն հանդիսանում նախարարության ոլորտային քաղաքականությունների խնդիրների բացահայտման և քաղաքականության ձևավորման ու որոշումների կայացման համար:

- Իրավական ակտերի նախագծերի e-draft հարթակը մասնակցային գործընթացի առավել կայացած գործիքներից է: Այդուհանդերձ, e-draft հարթակում առկա տեղեկատվությունից բավականին դժվար է դուրս բերել հանրային մասնակցության վերջնական արդյունքները: Միաժամանակ, պետական մարմինների կողմից հանրային ներգրավման գործընթացը հիմնականում սահմանափակվում է իրավական ակտերի նախագծերը հարթակում տեղադրելով:
- Նախարարություններում մասնակցային **գործընթացները հիմնականում ներառական չեն**: Նախարարությունների պաշտոնական կայքէջերում և սոցիալական ցանցերում հրապարակված նյութերում սուրդոթարգմանության, տիտրերի կամ ձայնային ուղեկցումների առկայության, հաշմանդամություն ունեցող և ազգային փոքրամասնությունների ներգրավման մակարդակը տատանվում է 0-25 տոկոսային կետի շրջանակներում, որը կարելի է գնահատել ցածր:
- Նախարարին կից հասարակական խորհուրդներում, նախարարության կողմից ձևավորված աշխատանքային և այլ ձևաչափով խմբերում հաշմանդամություն ունեցող և ազգային փոքրամասնությունների ներգրավվածությունը կրում է էպիզոդիկ բնույթ:
- Նախարարությունների պաշտոնական կայքէջերում և սոցիալական ցանցերում ՀՀ կառավարության որոշումների, ռազմավարական, հայեցակարգային փաստաթղթերի, գործողությունների ծրագրերի ու ճանապարհային քարտեզների, ընդունված և հրապարակված իրավական ակտերի, մատուցվող ծառայությունների նկարագրերի վերաբերյալ **տեղեկատվության հասանելիությունը գործնականում դեռևս չի կարող ապահովել արդյունավետ հանրային մասնակցություն**: Կայքէջերում բացակայում է «միասնական» կառուցվածքի մոտեցումը և ֆիլտրման բավարար համակարգերը, կայքէջերից ոչ մեկում առկա չեն գնահատման հաշվետվություններ և զեկույցներ, կայքէջերի կառուցվածքը (ըստ տարիների զեկույցները ցուցադրելու հնարավորությունը, համարակալումների բացակայությունը և այլն) դժվարացնում է ճշգրտել հրապարակված զեկույցների և հաշվետվությունների քանակը դրանց հասանելիության մակարդակը:

Նախարարություններից ստացված տվյալների վերլուծության գնահատումը հնարավորություն տվեց բացահայտելու նաև խնդիրներ, որոնք էական ազդեցություն են ունեցել մասնակցային կառավարման համաթվի հաշվարկման համատեքստում և կարիք ունենք շուտափույթ բարելավման: Մասնավորապես.

- Նախարարությունների մեծամասնությունը չեն տրամադրել ամբողջական քանակական տվյալներ մասնակցային կառավարման համաթվի հաշվարկման ելակետային հարցաշարի կոնկրետ հարցերին: Շատ դեպքերում նշվել են ընդհանրական պատասխաններ՝ «բոլորը» կամ հղում է կատարվել նախարարության կայքէջին: Պատասխանների բացակայությունները (օրինակ՝ հասարակական խորհրդի նիստեր չկազմակերպելը, իրավական ակտերը կայքում չտեղադրելը և այլն)¹²

¹² Որպես հիմնավորում նշվում է, որ իրավական ակտերը նախարարության կայքէջ հնարավոր է վերբեռնել միայն նախարարության շենքում տեղակայված համակարգչից:

Նախարարությունները հիմնավորել են 2020 թ. կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սահմանափակումներով: Նման մոտեցումները չեն կարող արդարացված լինել՝ հաշվի առնելով համավարակի ընթացքում աշխատանքի հեռավար կազմակերպման հնարավորությունները (հանդիպման առցանց հարթակներ, կայքի կառավարման վահանակի հեռավար մուտքի հնարավորություններ):

- Նախարարությունների կողմից հարցաշարի պատասխաններին տրամադրվել են նաև հակասական պատասխաններ: Մասնավորապես, առանձին նախարարությունների դեպքում 2020 թ. ընդունված իրավական ակտերի քանակը 2-3 անգամ պակաս է նախարարության կայքէջում նույն թվականին հրապարակված իրավական ակտերից:¹³
- Նախարարությունների կողմից մասնակցային կառավարման համաթվի հաշվարկման հարցաշարին ընդհանրական, ոչ հստակ և հակասող պատասխանների տրամադրումը վկայում է նախարարություններում քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև մասնակցային գործընթացի գործիքակազմերի կիրառման ոլորտում նախարարությունների հիմնական կառուցվածքային ստորաբաժանումների միջև համագործակցության և աշխատանքների չհամակարգված գործունեության, անձնակազմի գիտելիքների ցածր մակարդակի մասին, որոնք իրենց հերթին պայմանավորել են մասնակցային կառավարման համաթվի հաշվարկման տվյալների ներկայացուցչականության և բացահայտված խնդիրների ռիսկայնությունը:
- Նախարարություններում բացակայում են քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում հանրային մասնակցության գործիքակազմերով ստացված տեղեկատվության վերաբերյալ վիճակագրական տվյալները, ինչպես նաև հանրային մասնակցության ապահովման առանձին ինստիտուցիոնալ կառույցների՝ նախարարին կից հասարակական խորհուրդների, հանրային խորհրդի, այլ ձևաչափերով ձևավորված աշխատանքային խմբերի կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման/մերժման արդյունքների վերաբերյալ տվյալները:

Ելնելով վերոնշյալ եզրահանգումներից, կարելի է պնդել, որ չնայած մասնակցային կառավարման համաթվի մշակման առաջին փորձին՝ ուսումնասիրության արդյունքները ստացվել են հավաքագրված ելակետային տվյալների և դրանց արժանահավատության ռիսկերի առկայության պայմաններում: Այդուհանդերձ, մասնակցային կառավարման համաթվի գործիքը հնարավորություն է ընձեռել վերհանելու քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում նախարարությունների կողմից մասնակցային եղանակների կիրառման համակարգային խնդիրներն ու բացերը, որոնք արժանի են քննարկման և լուծման ՀՀ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության և դրա իրականացման 2022-2024 թվականների միջոցառումների ծրագրի և ճանապարհային քարտեզի շրջանակներում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով մասնակցային կառավարման համաթվի հաշվարկման ու գնահատման հիմնական բացահայտումներից ու եզրակացություններից՝ առաջարկվում է ՀՀ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության և դրա իրականացման 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզի շրջանակներում իրականացնել հետևյալ գործողությունները:

¹³ Նախարարությունների կողմից տրամադրված հարցաշարի պատասխաններում նման տարբերություններ են արձանագրվել ՀՀ Էկոնոմիկայի, ֆինանսների, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների դեպքում:

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով և դրանից բխող իրավական այլ ակտերով ամրագրել հանրային մասնակցության եղանակների ու դրանց կիրառման գործիքակազմերի կատարելագործման պահանջները,
2. մշակել պետական կառավարման մարմիններում քաղաքականության մշակման և իրականացման գործընթացների կազմակերպման և իրականացման օրենսդրական կարգավորումները՝ ներառելով քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում մասնակցության գործընթացի կիրառման ընթացակարգերը, ներկայացվող պահանջները, ծառայությունների մատուցման չափորոշիչները,
3. օրենսդրորեն սահմանել նախարարություններում քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում հանրային մասնակցության գործիքակազմերով ստացված տեղեկատվության, ինչպես նաև հանրային մասնակցության առանձին ձևաչափերի և դրանց արդյունքների վերաբերյալ վիճակագրություն վարելու պահանջ, ինչպես նաև մշակել և նախարարություններում ներդնել վարչական տվյալների հավաքագրման և ամփոփման ձևաթղթեր ու ցուցանիշներ,
4. արդիականացնել e-draft հարթակը և ընդլայնել դրա կիրարկման հնարավորությունը՝ ապահովելով օրակարգերի և առաջնահերթությունների սահմանման գործընթացում մասնակցություն, հարթակից դուրս ծավալվող հանրային մասնակցության արդյունքում ներկայացվող առաջարկությունների գետեղում, մասնակցության և հետադարձ կապի վերաբերյալ վիճակագրության ստացում, իրավական ակտի ընդունման ընթացքի մասին տեղեկանք և այլն,
5. նախարարությունների քաղաքականության մշակման ու իրականացման կառուցվածքային ստորաբաժանումների ծառայողների համար մշակել և իրականացնել քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացներում հանրային մասնակցության եղանակների ու գործիքակազմերի կիրառման վերաբերյալ կարողությունների զարգացման վերապատրաստման ծրագրեր,
6. միասնականացնել նախարարությունների կայքէջերի կառուցվածքը՝ այն հաշվով, որպեսզի ապահովվի քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի (ռազմավարություններ, ծրագրեր, իրավական ակտեր, հաշվետվություններ և գնահատման զեկույցներ) և մատուցվող ծառայությունների կանոնակարգված և մատչելի ներկայացումը, որոնման բավարար համակարգերի առկայությունը՝ ըստ տարիների, փաստաթղթերի տեսակների:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԹԻՎ. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

*Բոլոր հարցերը վերաբերում են **2020 թվականին** նախարարության կողմից քաղաքականության մշակման և իրականացման գործընթացին, ուստի պատասխանելիս խնդրում ենք Նշել միայն այդ ժամանակահատվածին վերաբերելի տվյալները:

h/h	Հարցը	Պատասխան	Պատասխանի հղումները և հիմնավորումները
1.	Նախարարության կողմից ընդհանուր քանի՞ Նորմատիվ իրավական ակտ է մշակվել (ներկայացվել է նախարարին, կառավարություն կամ վարչապետին):	Նշել թիվը _____	
2.	Նախարարության կողմից 2020 թվականի ընթացքում քանի՞ ռազմավարական, հայեցակարգային փաստաթղթեր, գործողությունների ծրագրեր ու ճանապարհային քարտեզներ են մշակվել(ներկայացվել է նախարարին, կառավարություն կամ վարչապետին):	Նշել թիվը _____	
3.	Ռազմավարական, հայեցակարգային փաստաթղթերի, գործողությունների ծրագրերի ու ճանապարհային քարտեզների Նախագծերի նախապատրաստման փուլում քանի՞ նախագծի մասով է նախարարությունը հանրությանը իրազեկել ¹⁴ տվյալ փաստաթղթում ձևակերպված խնդրի մասին:	Նշել թիվը _____	
4.	Ռազմավարական, հայեցակարգային փաստաթղթերի, գործողությունների ծրագրերի ու ճանապարհային քարտեզների Նախապատրաստման փուլում (նախքան նախարարին/ ՀՀ կառավարության/վարչապետի քննարկմանը ներկայացնելը) քանի՞ նախագծի դեպքում է իրազեկումը եղել նախարարության պաշտոնական	Նշել թիվը _____	

¹⁴ Նախարարության պաշտոնական կայքում կամ սոցիալական ցանցերով հրապարակում, մամուլի հաղորդագրություն, ուղերձ, պաշտոնական ելույթ և/կամ ասուլիս:

h/h	Հարցը	Պատասխան	Պատասխանի հղումները և հիմնավորումները
	կայքում կամ սոցիալական ցանցերով հրապարակման միջոցով:		
5.	Ռազմավարական, հայեցակարգային փաստաթղթերի, գործողությունների ծրագրերի ու ճանապարհային քարտեզների Նախապատրաստման (Նախքան Նախարարին/ ՀՀ կառավարության/վարչապետի քննարկմանը ներկայացնելը) փուլում քանի՞ Նախագծի դեպքում է հրազեկումը եղել մամուլի հաղորդագրության, ուղերձի, պաշտոնական էլույթի կամ ասուլիսի տեսքով:	Նշել թիվը _____	
6.	2020 թվականին Նախարարության կողմից ներկայացված և Նախարարի/ վարչապետի/ կառավարության կողմից ընդունված ռազմավարական, հայեցակարգային փաստաթղթերից, գործողությունների ծրագրերից ու ճանապարհային քարտեզներից քանի՞ սն են հրապարակվել Նախարարության պաշտոնական կայքէջում:	Նշել թիվը _____	
7.	2020 թվականին Նախարարության կողմից ներկայացված և Նախարարի/ վարչապետի/ կառավարության կողմից ընդունված ռազմավարական, հայեցակարգային փաստաթղթերի, գործողությունների ծրագրերի ու ճանապարհային քարտեզները պաշտոնական՝ arlis.am կայքէջում հրապարակումից հետո ի՞նչ ժամկետում են հրապարակվել Նախարարության պաշտոնական կայքէջում:	Յուրաքանչյուր տեսակի համար ընտրել տարբերակներից. <ul style="list-style-type: none"> - Պաշտոնական հրապարակման օրը - Պաշտոնական հրապարակման օրվանից մինչև 5 օր անց - Պաշտոնական հրապարակման օրվանից 5-10 օր անց - Պաշտոնական հրապարակման օրվանից 10-15 օր անց 	

h/h	Հարցը	Պատասխան	Պատասխանի հղումները և հիմնավորումները
		- Պաշտոնական հրապարակման օրվանից առնվազն 15 օր անց	
8.	Նախարարության պաշտոնական կայքէջում հրապարակված ռազմավարական, հայեցակարգային փաստաթղթերի, գործողությունների ծրագրերի ու ճանապարհային քարտեզների նախագծերից քանի՞սն ունեն կից հրապարակված հիմնավորումներ:	Նշել թիվը _____	
9.	Նախարարության պաշտոնական կայքէջում հրապարակված ռազմավարական, հայեցակարգային փաստաթղթերի, գործողությունների ծրագրերի ու ճանապարհային քարտեզներից քանի՞սն են առցանց հասանելի, ազատ օգտագործման և վերաօգտագործման համար: ¹⁵	Նշել թիվը _____	
10.	Նախարարության կողմից 2020 թվականի ընթացքում քանի՞ օրենքի նախագիծ է մշակվել (ներկայացվել է նախարարին, կառավարություն կամ վարչապետին):	Նշել թիվը _____	
11.	Օրենքի նախագծերի մշակման Նախապատրաստման փուլում քանի՞ օրենքի նախագծի մասով է նախարարությունը հանրությանը հրազեկել ¹⁶ տվյալ նախագծում ձևակերպված խնդրի մասին :	Նշել թիվը _____	
12.	Օրենքի նախագծի Նախապատրաստման փուլում քանի՞ նախագծի դեպքում է հրազեկումը եղել նախարարության պաշտոնական կայքում կամ սոցիալական ցանցերով հրապարակման միջոցով:	Նշել թիվը _____	

¹⁵ Յուրաքանչյուր ոչ կարող է ազատորեն ձեռք բերել կամ մուտք ունենալ, օգտագործել, փոխել և փոխանցել տվյալը ցանկացած նպատակով: Եթե pdf ֆորմատով է, ապա այն հնարավոր է պատճենել:

¹⁶ Նախարարության պաշտոնական կայքում կամ սոցիալական ցանցերով հրապարակում, մամուլի հաղորդագրություն, ուղերձ, պաշտոնական ելույթ և/կամ ասուլիս:

h/h	Հարցը	Պատասխան	Պատասխանի հղումները և հիմնավորումները
13.	Օրենքի նախագծի նախապատրաստման փուլում քանի՞ նախագծի դեպքում է իրազեկումը եղել ուղերձի, պաշտոնական ելույթի կամ ասուլիսի տեսքով:	Նշել թիվը _____	
14.	Նախարարության կողմից մշակված և ԱԺ կողմից 2020 թվականին ընդունված օրենքներից քանի՞սն են հրապարակվել նախարարության պաշտոնական կայքէջում:	Նշել թիվը _____	
15.	2020 թվականին նախարարության կողմից մշակված և ԱԺ կողմից ընդունված օրենքները պաշտոնական՝ arlis.am կայքէջում հրապարակումից հետո ի՞նչ ժամկետում են հրապարակվել նախարարության պաշտոնական կայքէջում:	<p>Ընտրել տարբերակներից.</p> <ul style="list-style-type: none"> - Պաշտոնական հրապարակման օրը - Պաշտոնական հրապարակման օրվանից մինչև 5 օր անց - Պաշտոնական հրապարակման օրվանից 5-10 օր անց - Պաշտոնական հրապարակման օրվանից 10-15 օր անց - Պաշտոնական հրապարակման օրվանից առնվազն 15 օր անց: 	
16.	Նախարարության պաշտոնական կայքէջում 2020թ. հրապարակված օրենքներից քանի՞սն ունեն հրապարակված կից հիմնավորումներ:	Նշել թիվը _____	
17.	Նախարարության պաշտոնական կայքէջում 2020թ. հրապարակված օրենքներից քանի՞սն են առցանց հասանելի ազատ օգտագործման և վերաօգտագործման համար: ¹⁷	Նշել թիվը _____	

¹⁷ Յուրաքանչյուր ոք կարող է ազատորեն ձեռք բերել կամ մուտք ունենալ, օգտագործել, փոխել և փոխանցել տվյալը ցանկացած նպատակով: Եթե pdf ֆորմատով է, ապա այն հնարավոր է պատճենել:

h/h	Հարցը	Պատասխան	Պատասխանի հղումները և հիմնավորումները
18.	Նախարարության կողմից 2020 թվականի ընթացքում կառավարության որոշման քանի՞ նախագիծ է մշակվել (ներկայացվել է նախարարին, կառավարություն կամ վարչապետին):	Նշել թիվը _____	
19.	Կառավարության որոշման նախագծերի մշակման նախապատրաստման փուլում քանի՞ նախագծի մասով է նախարարությունը հանրությանը իրազեկել ¹⁸ տվյալ փաստաթղթում ձևակերպված խնդրի մասին :	Նշել թիվը _____	
20.	Կառավարության որոշման նախապատրաստման փուլում քանի՞ նախագծի դեպքում է իրազեկումը եղել նախարարության պաշտոնական կայքում կամ սոցիալական ցանցերով հրապարակման միջոցով:	Նշել թիվը _____	
21.	Կառավարության որոշման նախապատրաստման փուլում քանի՞ նախագծի դեպքում է իրազեկումը եղել մամուլի հաղորդագրության կամ ասուլիսի ուղերձի, պաշտոնական ելույթի կամ ասուլիսի տեսքով:	Նշել թիվը _____	
22.	Նախարարության կողմից մշակված և կառավարության կողմից 2020 թվականին ընդունված որոշումներից քանի՞սն են հրապարակվել նախարարության պաշտոնական կայքէջում:	Նշել թիվը _____	
23.	2020 թվականին ընդունված կառավարության որոշումները պաշտոնական՝ arlis.am կայքէջում հրապարակումից հետո ի՞նչ ժամկետում են հրապարակվել նախարարության պաշտոնական կայքէջում:	Ընտրել տարբերակներից. - Պաշտոնական հրապարակման օրը - Պաշտոնական հրապարակման օրվանից մինչև 5 օր անց	

¹⁸ Նախարարության պաշտոնական կայքում կամ սոցիալական ցանցերով հրապարակում, մամուլի հաղորդագրություն, ուղերձ, պաշտոնական ելույթ և/կամ ասուլիս:

h/h	Հարցը	Պատասխան	Պատասխանի հղումները և հիմնավորումները
		<ul style="list-style-type: none"> - Պաշտոնական հրապարակման օրվանից 5-10 օր անց - Պաշտոնական հրապարակման օրվանից 10-15 օր անց - Պաշտոնական հրապարակման օրվանից առնվազն 15 օր անց: 	
24.	Նախարարության պաշտոնական կայքէջում հրապարակված կառավարության որոշումներից քանի՞սն ունեն կից հրապարակված հիմնավորումներ:	Նշել թիվը _____	
25.	Նախարարության պաշտոնական կայքէջում հրապարակված կառավարության որոշումներից քանի՞սն են առցանց հասանելի ազատ օգտագործման և վերաօգտագործման համար: ¹⁹	Նշել թիվը _____	
26.	2020 թվականի ընթացքում կազմված մոնիտորինգի զեկույցներից և ընթացիկ հաշվետվություններից քանի՞սն են հրապարակված նախարարության պաշտոնական կայքէջում:	Նշել թիվը _____	
27.	Նախարարության պաշտոնական կայքէջում հրապարակված մոնիտորինգի զեկույցներից և ընթացիկ հաշվետվություններից քանի՞սն են առցանց հասանելի ազատ օգտագործման և վերաօգտագործման համար:	Նշել թիվը _____	
28.	Նախարարության հայեցակարգերի, ռազմավարությունների, գործողությունների ծրագրերի ու ճանապարհային քարտեզների կամ քաղաքականության	Նշել թիվը _____	

¹⁹ Յուրաքանչյուր ոք կարող է ազատորեն ձեռք բերել կամ մուտք ունենալ, օգտագործել, փոխել և փոխանցել տվյալը ցանկացած նպատակով: Եթե pdf ֆորմատով է, ապա այն հնարավոր է պատճենել:

h/h	Հարցը	Պատասխան	Պատասխանի հղումները և հիմնավորումները
	այլ փաստաթղթերի վերջնական գնահատման ²⁰ քանի՞ զեկույց կամ հաշվետվություն է կազմվել 2020 թվականի ընթացքում:		
29.	Նախարարության հայեցակարգերի, ռազմավարությունների, գործողությունների ծրագրերի ու ճանապարհային քարտեզների կամ քաղաքականության այլ փաստաթղթերի վերջնական գնահատման քանի՞ զեկույց կամ հաշվետվություն է հրապարակված Նախարարության պաշտոնական կայքէջում:	Նշել թիվը _____	
30.	Նախարարության պաշտոնական կայքէջում հրապարակված գնահատման զեկույցներից կամ հաշվետվություններից քանի՞սն են առցանց հասանելի ազատ օգտագործման և վերաօգտագործման համար:	Նշել թիվը _____	
31.	Նախարարության կողմից մշակված (Նախարարի, կառավարության կամ վարչապետի կողմից հաստատված) հայեցակարգերի, ռազմավարությունների, գործողությունների ծրագրերի ու ճանապարհային քարտեզների, քաղաքականության այլ փաստաթղթերի վերջնական գնահատման զեկույցներից կամ հաշվետվություններից քանիսու՞մ է հիմնական շահառուների, հանրության առանձին հատվածների կարծիքը ուսումնասիրվել և ներառվել:	Նշել թիվը _____	
32.	2020 թվականին Նախարարության կողմից մշակված (Նախարարի, կառավարության կամ վարչապետի կողմից հաստատված) հայեցակարգերի, ռազմավարությունների,	Նշել թիվը _____	

²⁰ Ի տարբերություն մոնիտորինգի՝ քաղաքականության վերջնական գնահատումը (evaluation) չափում է, թե արդյոք քաղաքականությունը հասել է իր սահմանած արդյունքային ցուցանիշներին, և ինչ ազդեցություն է ունեցել քաղաքականության վերջնական սպառողի՝ քաղաքացու վրա:

h/h	Հարցը	Պատասխան	Պատասխանի հղումները և հիմնավորումները
	գործողությունների ծրագրերի ու ճանապարհային քարտեզների, քաղաքականության այլ փաստաթղթերի վերջնական գնահատման զեկույցներում ներառված՝ հիմնական շահառուների դիտարկումներից ու առաջարկներից քանի՞ սն են կիրառվել իրավական ակտերում լրացումներ ու փոփոխություններ կատարելու համար:		
